ԳՊՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2021Թ. ՆԻՍՏԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1.

Ք. Գավառ **30.01.2021թ.**

2021թ. հունվարի 30-ին կայացավ Գավառի պետական համալսարանի գիտական խորհրդի առցանց նիստը: Նիստին մասնակցում էին գիտխորհրդի 31 անդամներից 29-ը:

Օրակարգ՝

1.ԳՊՀ առկա ուսուցման ֆակուլտետներում 2020-2021 ուսումնական տարվա1-ին կիսամյակի առցանց դասընթացների որակի վերաբերյալ ուսանողների շրջանում անցկացված հարցումների արդյունքների մասին:

/զեկուցողներ՝ ՈԱԲ մասնագետներ Ք.Հայրապետյան, Մ.Նախրատյան/

2. ԳՊՀ առկա ուսուցման ֆակուլտետներում 2020-2021 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի դասընթացների անցկացման ձևաչափի վերաբերյալ:

/զեկուցողներ՝ ԳՊՀ ուսումնագիտական գծով պրոռեկտոր, դեկաններ/

3.ԳՊՀ հեռակա ուսուցման ֆակուլտետում 2021թ. ուսումնական տարվա 1-ին կիսամյակի քննաշրջանի անցկացման ձևաչափի վերաբերյալ:

/զեկուցողներ՝ ԳՊՀ ուսումնագիտական գծով պրոռեկտոր, ՀՈՒՖ փոխդեկան/

4.«ԳՊՀ ազնվության հայեցակարգի» փոփոխությունների և «ԳՊՀ ուսանողների բողոքների և բողոքարկումների քննարկման ու լուծման կարգի» նախագծերի քննարկում և հաստատում:

/զեկուցող՝ ԳՊՀ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Ն.Կուտուզյան/

5.ԳՊՀ պաշտոնների անձնագրերի և աշխատանքի նկարագրերի քննարկում և հաստատում:

/զեկուցող՝ ԳՊՀ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Ն.Կուտուզյան/

6.ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ Վ.Գրիգորյանի և ամբիոնի դասախոսների կողմից ՀՀ գիտության կոմիտե ներկայացվող «Եվրոպական էպիկական ավանդույթը և «Սասնա ծռեր» էպոսը» թեմայի երաշխավորման մասին:

/զեկուցող՝ ԳՊՀ ԲՍՖ դեկան Թ.Ասոյան/

7.Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ.-ԳՊՀ որակի ապահովման բաժնի մասնագետներ Ք.Հայրապետյանի և Մ.Նախրատյանի կողմից առկա ուսուցման ֆակուլտետներում 2020-2021 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի առցանց դասընթացների որակի վերաբերյալ ուսանողների շրջանում անցկացված հարցումների արդյունքների վերլուծությունը: Նրանք ներկայացրին հարցաշարը, դրանց արդյունքները և կատարված վերլուծությունը: Հարցմանը մասնակցել են առկա ուսուցման համակարգում սովորող

ուսանողների 60 տոկոսից ավելին: Վերլուծությունները ցույց են տվել, որ ուսանողները առցանց անցկացված դասընթացների որակը գնահատել են հիմնականում գերազանց և լավ: Նշվեց, որ, այնուամենայնիվ, կա նաև անբավարարվածության որոշակի մակարդակ՝ մոտ 2 տոկոս, որը բացառելու ուղղությամբ աշխատանքներ պետք է իրականացնել: Զեկուցողները ներկայացրին նաև ուսանողների արտահայտած դժգոհությունները և արած առաջարկությունները: Դժգոհությունները վերաբերել են անհատական աշխատանքներին, համակարգչի դիմաց երկար նստելու դժվարություններին, հոգնածությանը, տեսողական խնդիրներին, կապի խանգարումներին և այլն, իսկ առաջարկությունները վերաբերել են համալսարանում դասերն անցկացնելու հնարավորություններին:

Ելույթ ունեցան դեկաններն ու դասախոսները, որոնք կարծիքներ արտահայտեցին հարցաշարի և կատարված վերլուծությունների մասին:

Հիմք ընդունելով անցկացված հարցումների վերլուծությունը, արտահայտված կարծիքները՝

ՈՐՈՇԵՑԻՆ.- 1.ԳՊՀ առկա ուսուցման ֆակուլտետներում 2020-2021 ուսումնական տարվա1-ին կիսամյակի առցանց դասընթացների որակի վերաբերյալ ուսանողների շրջանում անցկացված հարցումների արդյունքներն ու դրանց վերլուծությունը ընդունել ի գիտություն:

2.Հանձնարարել ՈԱԲ մասնագետներին կատարելագործել հարցաշարը, այն դարձնել բազմաբնույթ և ճկուն՝ խուսափելով կրկնություններից:

3.Հանձնարարել դեկանատներին աշխատանքներ տանել բոլոր ուսանողներին հարցումների գործընթացում ներգրավելու ուղղությամբ:

ԼՍԵՑԻՆ.- ԳՊՀ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Ն.Կուտուզյանի և դեկանների տեսակետները ԳՊՀ առկա ուսուցման ֆակուլտետներում 2020-2021 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի դասընթացների անցկացման ձևաչափի վերաբերյալ: Զեկուցողները ներկայացրին իրենց կարծիքները, որոնք ընդհանուր առմամբ հանգում էին դասերը զուգակցված՝ առկա և առցանց ձևաչափերով անցկացնելու տրամադրվածությանը:

Հարցի մասին ելույթ ունեցավ ԳՊՀ ռեկտոր Ռ.Հակոբյանը: Նա տեղեկացրեց, որ ստացվել է ԿԳՄՍ նախարարության շրջաբերականը դասերը կազմակերպելիս սանիտարահամաճարակային անվտանգության կանոնների պահպանման մասին, նշեց, որ Համալսարանը խստագույնս հետևում է սահմանված պահանջներին:

ՈՐՈՇԵՑԻՆ.-1. Հիմք ընդունելով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021թ. հունվարի 25-ի թիվ 01/11.2/742-2021 գրությունը, հաշվի առնելով ՀՀ-ում կորոնավիրուսային (COVID-19) հիվանդությամբ պայմանավորված համաճարակային վիճակը և ելնելով զուգակցված ուսուցման սկզբունքով Գավառի պետական համալսարանի ուսանողների, դասախոսների ու աշխատակիցների սանիտարահամաճարակային անվտանգությունը ապահովելու և համավարակի տարածումից խուսափելու անհրաժեշտությունից՝

ԳՊՀ առկա ուսուցման ֆակուլտետների բակալավրիատի բոլոր կուրսերում 2020-2021 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի ուսումնական գործընթացը կազմակերպել համալսարանում առկա ձևաչափով՝ ըստ անհրաժեշտության համապատասխան դասընթացների ժամերը կազմակերպելով առցանց, հեռավար ձևով:
2. ԳՊՀ առկա ուսուցման ֆակուլտետների մագիստրատուրայի առաջին կուրսերում 2020-2021 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի ուսումնական գործընթացը կազմակերպել առցանց, հեռավար ձևով՝ ըստ անհրաժեշտության համապատասխան դասընթացների ժամերը կազմակերպելով համալսարանում՝ առկա ձևաչափով:
3. ԳՊՀ առկա ուսուցման ֆակուլտետների մագիստրատուրայի երկրորդ կուրսերի 2020-2021 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի գիտամանկավարժական և գիտահետազոտական պրակտիկաները կազմակերպել համալսարանի համապատասխան ամբիոններում առկա ձևաչափով՝ ըստ անհրաժեշտության ապահովելով առցանց, հեռավար աշխատանք մագիստրոսական ծրագրերի ղեկավարների և թեզերի ղեկավարների հետ:
4. Գավառի պետական համալսարանի հեռակա ուսուցման ֆակուլտետի բոլոր կուրսերում 2021թ. ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննաշրջանն ու լուծարային շրջանները կազմակերպել առցանց, հեռավար ձևով:
5.ԳՊՀ-ում վարչական, ուսումնաօժանդակ, տնտեսատեխնիկական աշխատակազմերի անդամների աշխատանքները կազմակերպել համալսարանում առկա ձևաչափով՝ ըստ անհրաժեշտության և հնարավորության զուգակցելով աշխատանքային գործառույթների առցանց, հեռավար իրականացման հետ:
6.ԳՊՀ-ում ուսումնական և աշխատանքային գործընթացները կազմակերպելիս խստագույնս պահպանել կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածման, կանխարգելման նպատակով կիրառվող սանիտարահակահամաճարակային կանոնները և անվտանգության անհրաժեշտ պայմանները:
7.Հանձնարարել դեկանատներին դասացուցակները կազմելիս հաշվի առնել դասընթացների անցկացման ձևաչափերի փոփոխությունը:

ԼՍԵՑԻՆ.- ԳՊՀ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Ն.Կուտուզյանի, ՀՈՒՖ փոխդեկան Մ.Գարեյանի զեկուցումները հեռակա ուսուցման ֆակուլտետում 2021 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի քննաշրջանի անցկացման ձևաչափի վերաբերյալ: Զեկուցողները, ներկայացնելով հեռակա ուսուցման ֆակուլտետում ընթացող դասերի վիճակը և այն գնահատելով կազմակերպված ու առանց էական թերությունների, որոնք հիմնականում կապված են կապի և հոսանքի՝ համալսարանից դուրս խանգարումների հետ, առաջարկեցին 1-ին կիսամյակի քննաշրջանն անցկացնել առցանց, հեռավար տարբերակով, քանի որ դասերն արդեն այդ ձևաչափով են անցել ու անցնում:
Ելույթ ունեցողներն առաջարկեցին նաև հաշվի առնել ուսանողների և դասախոսների ցանկությունները:

Հիմք ընդունելով զեկուցումները և բերված հիմնավորումները՝

ՈՐՈՇԵՑԻՆ.- 1.ԳՊՀ հեռակա ուսուցման ֆակուլտետում 2021 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի քննաշրջանն անցկացնել առցանց, հեռավար ձևաչափով:
2.Հանձնարարել ՀՈՒՖ դեկանատին ապահովել 2021 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի քննաշրջանի կազմակերպման և անցկացման անխափան ընթացքը:

ԼՍԵՑԻՆ.-ԳՊՀ պրոռեկտոր Ն.Կուտուզյանի զեկուցումը «ԳՊՀ ակադեմիական ազնվության հայեցակարգի» փոփոխությունների, «ԳՊՀ ուսանողների բողոքների և բողոքարկումների քննարկման ու լուծման կարգի» նախագծերի և ԳՊՀ պաշտոնների անձնագրերի և աշխատանքի նկարագրերի վերաբերյալ: Զեկուցողը նշեց, որ նշված փաստաթղթերը վերանայելու, լրամշակելու կարիք կար: Այդ նպատակով առաջարկվել էր ԳՊՀ բոլոր կառուցվածքային ստորաբաժանումներում կազմակերպել քննարկումներ և ներկայացնել փոփոխությունների առաջարկություններ՝ համապատասխան հիմնավորումներով: Արված դիտարկումների հիման վրա նշված փաստաթղթերը լրամշակվել են և ներկայացվել հաստատման: Նշվեց նաև, որ կատարված փոփոխությունները նպատակ ունեն բարձրացնել ուսանողների իրավունքների պաշտպանության մակարդակը, բացառել ակադեմիական անազնվության դեպքերը, որոշարկել ԳՊՀ պաշտոնների անձնագրերի և աշխատանքի նկարագրի պահանջները:

Ելույթ ունեցան ԳՊՀ ռեկտոր Ռ.Հակոբյանը, դեկանները, դասախոսներ: Նրանք նշեցին, որ կոլեկտիվ աշխատանքի շնորհիվ հաստատման ներկայացված փոստաթղթերը բարելավվել են:

Հիմք ընդունելով զեկուցումը, արտահայտված կարծիքները, ԳՊՀ ստորաբաժանումներում իրականացված քննարկումների արդյունքները՝

ՈՐՈՇԵՑԻՆ.-Հաստատել «ԳՊՀ ակադեմիական ազնվության հայեցակարգի» փոփոխությունները, «ԳՊՀ ուսանողների բողոքների և բողոքարկումների քննարկման ու լուծման կարգի» փոփոխությունները և ԳՊՀ պաշտոնների անձնագրերի և աշխատանքի նկարագրերի փաստաթղթերում կատարված փոփոխությունները:

ԼՍԵՑԻՆ.-ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի դեկան Թ.Ասոյանի զեկուցումը ԲՖ հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ Վ.Գրիգորյանի և ամբիոնի դասախոսների կողմից մշակված «Եվրոպական էպիկական ավանդույթը և «Սասնա ծռեր» էպոսը» թեման ՀՀ գիտության կոմիտե ներկայացնելու երաշխավորման մասին:Նշվեց. որ հանգամանորեն կազմվել է թեմայի կատարման ծրագիրը,հիմնավորված է արդիականությունը, ներկայացված է ժամանակացույցը:Ծրագիրը քննարկվել է նաև ամբիոնում:

Ելույթ ունեցավ ծրագրի ղեկավար, հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ Վ.Գրիգորյանը, որը հանգամանորեն անդրադարձավ թեմայի և ծրագրի նրբություններին, պատասխանեց հարցերի:

Հիմք ընդունելով զեկուցումը, Վ.Գրիգորյանի պարզաբանումները՝

ՈՐՈՇԵՑԻՆ.-Երաշխավորել հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ Վ.Գրիգորյանի և ամբիոնի դասախոսների կողմից մշակված «Եվրոպական

էպիկական ավանդույթը և «Սասնա ծռեր» էպոսը» թեման ներկայացնել ՀՀ ԿԳՄՍՆ գիտության կոմիտե:

Գիտական խորհրդի նախագահ՝ Ռ. Հակոբյան
Գիտական քարտուղար՝ Թ. Ասոյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2.

Ք. Գավառ 27.02.2021թ.

2021թ. փետրվարի 27-ին կայացավ Գավառի պետական համալսարանի գիտական խորհրդի առցանց նիստը: Նիստին մասնակցում էին գիտխորհրդի 31 անդամներից 20-ը:

Օրակարգ՝

1.«ԳՊՀ ակադեմիական խորհրդատուների գործունեության կարգի» նախագծի քննարկում և հաստատում:

/զեկուցող՝ ԳՊՀ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Ն.Կուտուզյան/

2.«Գավառի պետական համալսարանում դասալսումների կազմակերպման, քննարկման և գնահատման կարգի» փոփոխությունների քննարկում և հաստատում:

/զեկուցող՝ ԳՊՀ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Ն.Կուտուզյան/

3.«Գավառի պետական համալսարանի սկսնակ դասախոսների և աշխատակիցների մենթորության կազմակերպման կարգի» նախագծի քննարկում և հաստատում:

/զեկուցող՝ ԳՊՀ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Ն.Կուտուզյան/

4. «Գավառի պետական համալսարանի բակալավրիատի և մագիստրատուրայի ավարտական կուրսերի ուսանողների ամփոփիչ ատեստավորման կարգի» փոփոխությունների քննարկում և հաստատում:

/զեկուցող՝ ԳՊՀ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Ն.Կուտուզյան/

5. «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի գույքի պահպանման և տնօրինման կարգի» փոփոխությունների քննարկում և հաստատում:

6.Գավառի պետական համալսարանի պաշտոնների անձնագրեր և աշխատանքի նկարագրերի քննարկում և հաստատում

/զեկուցող՝ԳՊՀ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Ն.Կուտուզյան/

7. ԳՊՀ անազնվության դեպքերը քննող հանձնաժողովի դասախոս անդամների ընտրություն:

8. Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ.- ԳՊՀ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Ն.Կուտուզյանի զեկուցումը համալսարանական «ԳՊՀ ակադեմիական խորհրդատուների գործունեության կարգի», «Գավառի պետական համալսարանում դասալսումների կազմակերպման, քննարկման և գնահատման կարգի», «Գավառի պետական համալսարանի սկսնակ դասախոսների և աշխատակիցների մենթորության

կազմակերպման կարգի», ««Գավառի պետական համալսարան» հիմնադրամի գույքի պահպանման և տնօրինման կարգի», «Գավառի պետական համալսարանի բակալավրիատի և մագիստրատուրայի ավարտական կուրսերի ուսանողների ամփոփիչ ատեստավորման կարգի» նախագծերի մասին: Զեկուցողը ներկայացրեց նշված փաստաթղթերի բարելավման և մշակման գործընթացները: Նշվեց, որ փաստաթղթերի բարելավման և մշակման աշխատանքներին մասնակցել են համալսարանի բոլոր ստորաբաժանումների աշխատակիցները, արվել են առաջարկություններ, օգտակար դիտողություններ, որոնցից շատերը ներառվել են առաջարկվող նախագծերում:

Կարգերի մասին իրենց կարծիքներն ու նկատառումներն արտահայտեցին դեկաններ Մ.Ավագյանը, Հ.Ղաջոյանը, Ս.Ամիրխանյանը, Թ.Ասոյանը, ամբիոնների վարիչները, դասախոսներ: Նրանք նշեցին, որ նախագծերում կատարված փոփոխությունները բարելավել են դրանց բովանդակությունը:

Հիմք ընդունելով զեկուցումը, արտահայտված կարծիքները՝

ՈՐՈՇԵՑԻՆ.-1.Հաստատել «ԳՊՀ ակադեմիական խորհրդատուների գործունեության կարգը»:

2. Հաստատել «Գավառի պետական համալսարանում դասալսումների կազմակերպման, քննարկման և գնահատման կարգը»:

3. Հաստատել «Գավառի պետական համալսարանի սկսնակ դասախոսների և աշխատակիցների մենթորության կազմակերպման կարգը»:

4.Հաստատել ««Գավառի պետական համալսարան» հիմնադրամի գույքի պահպանման և տնօրինման կարգը»:

5.Հաստատել «Գավառի պետական համալսարանի բակալավրիատի և մագիստրատուրայի ավարտական կուրսերի ուսանողների ամփոփիչ ատեստավորման կարգը»:

ԼՍԵՑԻՆ.- ԳՊՀ անազնվության դեպքերը քննող հանձնաժողովի դասախոս անդամների ընտրության հարցը: Նշվեց, որ Կարգի համաձայն՝ ԳՊՀ անազնվության դեպքերը քննող հանձնաժողովը կազմված է հինգ անդամից՝ 2 դասախոս, 3 ուսանող: Ֆակուլտետներում առաջադրվել են դասախոս անդամների թեկնածություններ, որոնցից պետք է կատարվի հանձնաժողովի 2 անդամի ընտրությունը: Առաջարկվեց կազմել հաշվիչ հանձնաժողով՝ հետևյալ կազմով.

Ամիրխանյան Սամվել – նախագահ

Խաչիկյան Թերմինե – քարտուղար

Նախրատյան Մարիամ – անդամ

Քվեաթերթիկում գրանցվեցին ԳՊՀ անազնվության դեպքերը քննող հանձնաժողովի անդամների թեկնածուների անունները.

1.Միրիբյան Գայանե – բանասիրական ֆակուլտետ, ՕԼԳ ամբիոնի վարիչ

2.Խուրշուդյան Արմեն –բնագիտական ֆակուլտետ, ԻՖՄԳ ամբիոնի դասախոս

3.Խաչատրյան Գայանե – տնտեսագիտական ֆակուլտետ

4.Ամիրյան Անի – հումանիտար մասնագիտ. ֆակուլտետ, ԻԳ ամբիոնի դասախոս

Անցկացվեց փակ, գաղտնի քվեարկություն, որին մասնակցեցին գիտխորհրդի 20 անդամներ: Բաժանվել է 20 քվեաթերթիկ, քվեատուփում եղել է 20 քվեաթերթիկ: Քվեարկության արդյունքները ներկայացրեց Ս.Ամիրխանյանը: Նա պարզաբանեց, որ ԳՊՀ անազնվության դեպքերը քննող հանձնաժողովի անդամներ են ընտրվում այն երկու թեկնածուները, որոնք ավելի շատ ձայներ են ստացել:

1.Միրիբյան Գայանե – կողմ՝ 18
2.Խուրշուդյան Արմեն – կողմ՝ 4
3.Խաչատրյան Գայանե – կողմ՝ 16
4.Ամիրյան Անի – կողմ՝ 2

Այսպիսով, ԳՊՀ անազնվության դեպքը քննող հանձնաժողովի անդամներ ընտրվեցին Գայանե Միրիբյանը և Գայանե Խաչատրյանը: Կազմվեց հաշվիչ հանձնաժողովի նիստի արձանագրությունը:

Հիմք ընդունելով քվեարկության արդյունքները՝

ՈՐՈՇԵՑԻՆ.-1.Հաստատել ԳՊՀ անազնվության դեպքերը քննող հանձնաժողովի անդամների ընտրության համար անցկացված փակ, գաղտնի քվեարկության արդյունքները:

2. ԳՊՀ անազնվության դեպքերը քննող հանձնաժողովի անդամների՝ Գայանե Միրիբյանի և Գայանե Խաչատրյանի ընտրության արդյունքները ներկայացնել ԳՊՀ ռեկտոր Ռ.Հակոբյանին՝ հրամանագրման:

Գիտական խորհրդի նախագահ՝ Ռ.Հակոբյան
Գիտական քարտուղար՝ Թ.Ասոյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3.

Ք. Գավառ **27.03.2021թ.**

2021թ. մարտի 27-ին կայացավ Գավառի պետական համալսարանի գիտական խորհրդի առցանց նիստը: Նիստին մասնակցում էին գիտխորհրդի 31 անդամներից 24-ը: **Օրակարգ՝**

1.«ԳՊՀ պրոֆեսորադասախոսական անձնակազմի մասնագիտական որակների գնահատման և որակավորման բարձրացման քաղաքականության մշակման ու իրականացման ընթացակարգ»-ի փոփոխությունների նախագծի քննարկում և հաստատում:

2.«Գավառի պետական համալսարանի որակի ապահովման բաժնի գործունեության կանոնակարգ»-ի փոփոխությունների նախագծի քննարկում և հաստատում:

3.«Գավառի պետական համալսարանում հանրային նշանակության միջոցառումների կազմակերպման, դրանց մասին իրազեկման և հասարակության հետ հետադարձ կապի ապահովման կանոնակարգ»-ի նախագծի քննարկում և հաստատում:

4. «Գավառի պետական համալսարանի բարձրագույն կրթության որակավորումների շրջանակ»-ի նախագծի քննարկում և հաստատում:

5. «Գավառի պետական համալսարանում կրթության որակի ապահովման ձեռնարկ»-ի փոփոխությունների ու լրացումների նախագծի քննարկում և հաստատում:
6. «Գավառի պետական համալսարանում գիտահետազոտական գործունեության իրականացման և խրախուսման քաղաքականության հիմունքներ»-ի նախագծի քննարկում և հաստատում:

/զեկուցող՝ ԳՊՀ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Ն.Կուտուզյան/

7.Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ. - ԳՊՀ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Ն.Կուտուզյանի զեկուցումը Գավառի պետական համալսարանի գործունեությունը կարգավորող ներբուհական իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու, դրանք քննարկելու և հաստատելու մասին: Զեկուցողը հանգամանորեն ներկայացրեց այդ փաստաթղթերի նշանակությունն ու դերը Գավառի պետական համալսարանում պրոֆեսորադասախոսական անձնակազմի մասնագիտական որակների գնահատման և որակավորման բարձրացման քաղաքականության մշակման, որակի ապահովման բաժնի գործունեության, հանրային նշանակության միջոցառումների կազմակերպման, դրանց մասին իրազեկման և հասարակության հետ հետադարձ կապի ու կրթության որակի ապահովման, բարձրագույն կրթության որակավորումների, գիտահետազոտական գործունեության իրականացման և խրախուսման քաղաքականության իրականացման գործընթացներում: Նշվեց, որ նախագծերը մինչ գիտական խորհրդի հաստատմանը ներկայացնելը քննարկվել են համալսարանի մյուս ստորաբաժանումներում, արվել են առաջարկություններ, որոնք, ըստ անհրաժեշտության, ներառվել են նախագծերում:

Արտահայտվեց ԳՊՀ ռեկտոր Ռ.Հակոբյանը: Ելույթ ունեցան ֆակուլտետների դեկաններ Հ.Ղաջոյանը, Ս.Ամիրխանյանը, Մ.Ավագյանը, դասախոսներ: Նրանք առաջարկեցին հաստատել փաստաթղթերը:

Հիմք ընդունելով զեկուցումը, ելույթները, քննարկման ընթացքում արված առաջարկությունները՝

ՈՐՈՇԵՑԻՆ.- 1.Հաստատել «ԳՊՀ պրոֆեսորադասախոսական անձնակազմի մասնագիտական որակների գնահատման և որակավորման բարձրացման քաղաքականության մշակման ու իրականացման ընթացակարգ»-ը՝ փոփոխություններով:
2.Հաստատել «Գավառի պետական համալսարանի որակի ապահովման բաժնի գործունեության կանոնակարգ»-ը՝ փոփոխություններով:
3.Հաստատել «Գավառի պետական համալսարանում հանրային նշանակության միջոցառումների կազմակերպման, դրանց մասին իրազեկման և հասարակության հետ հետադարձ կապի ապահովման կանոնակարգ»-ը՝ փոփոխություններով:
4.Հաստատել «Գավառի պետական համալսարանի բարձրագույն կրթության որակավորումների շրջանակ»-ը՝ փոփոխություններով:
5.Հաստատել «Գավառի պետական համալսարանում կրթության որակի ապահովման ձեռնարկ»-ը փոփոխություններով և լրացումներով:

6.Հաստատել «Գավառի պետական համալսարանում գիտահետազոտական գործունեության իրականացման և խրախուսման քաղաքականության հիմունքներ»-ը:

ԼՍԵՑԻՆ.- Ֆակուլտետների և բաժինների հաղորդումները ինքնավերլուծության զեկույցի ուղղությամբ տարվող աշխատանքների մասին: Իրենց դիտարկումները ներկայացրին աշխատանքային խմբերը:

ԳՊՀ ռեկտոր Ռ.Հակոբյանը և ուսումնագիտական գծով պրոռեկտոր Ն. Կուտուզյանը գիտական խորհրդի անդամների ուշադրությունը հրավիրեցին ժամկետների և աշխատանքի արդյունավետության վրա, առաջարկեցին արագացնել հավելվածների պատրաստման ընթացքը:

ՈՐՈՇԵՑԻՆ.-Ինքնավերլուծության զեկույցի աշխատանքները կատարել ժամանակացույցին համապատասխան:

Գիտական խորհրդի նախագահ՝ Ռ.Հակոբյան

Գիտական քարտուղար՝ Թ.Ասոյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 4.

Ք. Գավառ **17.04.2021թ.**

2021թ. ապրիլի 17-ին կայացավ Գավառի պետական համալսարանի գիտական խորհրդի առցանց նիստը: Նիստին մասնակցում էին գիտխորհրդի 31 անդամներից 24-ը: **Օրակարգ՝**

1. ԳՊՀ Վարշամ Ավետյանի անվան պատմության թանգարանի նոր կանոնակարգի նախագծի քննարկման և հաստատման մասին:
2.«Գավառի պետական համալսարանի գործավարության և փաստաթղթաշրջանառության կարգ»-ում լրացումներ և փոփոխություններ կատարելու վերաբերյալ:
3.ԳՊՀ պրոֆեսորադասախոսական անձնակազմի անդամների՝ 2019-2020 ուսումնական տարվա գիտահետազոտական և ուսումնամեթոդական գործունեության գնահատման արդյունքներով առավելագույն միավորներ ունեցող դասախոսների խրախուսման մասին:
4.ԳՊՀ-ում Արցախյան պատերազմի հերոսներին նվիրված լսարանի բացման մասին:
/զեկուցող՝ԳՊՀ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Ն.Կուտուզյան/
5.Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ.- ԳՊՀ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Ն.Կուտուզյանի զեկուցումը ԳՊՀ Վարշամ Ավետյանի անվան պատմության թանգարանի նոր կանոնակարգի նախագծի քննարկման և հաստատման մասին: Զեկուցողը նախ անդրադարձավ համալսարանի երկարամյա դասախոս, պատմական գիտությունների թեկնածու Վ.Ավետյանի գիտամանկավարժական գործունեությանը և թանգարանը նրա անունով անվանակոչելու հանգամանքներին: Այնուհետ ներկայացրեց նոր կանոնակարգի քննարկման ընթացքը համալսարանի ֆակուլտետներում,

ամբիոններում և կառուցվածքային այլ ստորաբաժանումներում: Նշվեց, որ ըստ անհրաժեշտության հաշվի են առնվել արված առաջարկությունները և դիտողությունները: Զեկուցողը ներկաների ուշադրությունը հրավիրեց այն հանգամանքի վրա, որ թանգարանը ԳՊՀ այն կարևոր օղակներից մեկն է, որով համալսարանը ներկայանում է իր այցելուներին:
Արտահայտվեցին ԳՊՀ ռեկտոր Ռ. Հակոբյանը, հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի դեկան Հ.Ղաջոյանը:

Հիմք ընդունելով քննարկման արդյունքները, պրոռեկտոր Ն.Կուտուզյանի զեկուցումը՝ ԳՊՀ գիտխորհուրդը

ՈՐՈՇԵՑԻՆ.- 1.Հաստատել ԳՊՀ Վարշամ Ավետյանի անվան պատմության թանգարանի նոր կանոնակարգը:
2. ԳՊՀ Վարշամ Ավետյանի անվան պատմության թանգարանի աշխատանքները կազմակերպել նոր կանոնակարգի համաձայն:

ԼՍԵՑԻՆ.- ԳՊՀ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Ն.Կուտուզյանի զեկուցումը «Գավառի պետական համալսարանի գործավարության և փաստաթղթաշրջանառության կարգ»-ում լրացումներ և փոփոխություններ կատարելու վերաբերյալ: Զեկուցողը նշեց, որ որոշակի փոփոխություններ են կատարվել ԳՊՀ նշված կարգում՝ ելնելով նպատակահարմարությունից, ժամանակի պահանջից և ԳՊՀ -ում գործավարության և փաստաթղթաշրջանառության գործընթացները արագ ու ժամանակին իրականացնելու հանգամանքներից: Նշվեց նաև, որ ԳՊՀ ֆակուլտետներում, ամբիոններում և մյուս ստորաբաժանումներում քննարկվել են առաջարկվող փոփոխությունները:

Հիմք ընդունելով ԳՊՀ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Ն.Կուտուզյանի զեկուցումը՝ գիտխորհրդի անդամները

ՈՐՈՇԵՑԻՆ.- 1.Հաստատել «Գավառի պետական համալսարանի գործավարության և փաստաթղթաշրջանառության կարգ»-ում կատարված լրացումները և փոփոխությունները:

ԼՍԵՑԻՆ.- ԳՊՀ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Ն.Կուտուզյանի զեկուցումը ԳՊՀ պրոֆեսորադասախոսական անձնակազմի անդամների՝ 2019-2020 ուսումնական տարվա գիտահետազոտական և ուսումնամեթոդական գործունեության գնահատման արդյունքներով առավելագույն միավորներ ունեցող դասախոսներին խրախուսելու մասին: Զեկուցողը նշեց, որ նախապես մշակվել էր միավորների հաշվման սանդղակ, որտեղ հաշվի էին առնվել դասախոսների գիտահետազոտական և ուսումնամեթոդական գործունեության բոլոր տվյալները: Գնահատման արդյունքներով լավագույն ցուցանիշներ են ունեցել 6 դասախոս.
1.Թունյան Վալերի – Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետ
2.Հակոբյան Մամիկոն – Բնագիտական ֆակուլտետ
3.Թադևոսյան Արտաշես – Բնագիտական ֆակուլտետ
4.Ղռեջյան Լուսինե – Բանասիրական ֆակուլտետ
5.Սարգսյան Ռուզաննա – Բանասիրական ֆակուլտետ

6.Առաքելյան Վալերի – Տնտեսագիտական ֆակուլտետ
Առաջարկվեց նշված դասախոսներին ներկայացնել դրամական խրախուսման:
Հիմք ընդունելով ԳՊՀ համապատասխան կանոնակարգը՝
ՈՐՈՇԵՑԻՆ.-1. 2019-2020 ուսումնական տարվա գիտահետազոտական և ուսումնամեթոդական գործունեության գնահատման արդյունքներով առավելագույն միավորներ հավաքած ներքոհիշյալ դասախոսներին ներկայացնել դրամական խրախուսման.
1.Թունյան Վալերի – Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետ
2.Հակոբյան Մամիկոն – Բնագիտական ֆակուլտետ
3.Թադևոսյան Արտաշես – Բնագիտական ֆակուլտետ
4.Ղռեջյան Լուսինե – Բանասիրական ֆակուլտետ
5.Սարգսյան Ռուզաննա – Բանասիրական ֆակուլտետ
6.Առաքելյան Վալերի – Տնտեսագիտական ֆակուլտետ
2.1-ին կետի որոշումը կատարել ապրիլ և մայիս ամիսներին:
ԼՍԵՑԻՆ.- ԳՊՀ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Ն.Կուտուզյանի զեկուցումը ԳՊՀ-ում Արցախյան պատերազմի հերոսներին նվիրված լսարանի բացման մասին: Զեկուցողը, ներկայացնելով Արցախյան պատերազմի արհավիրքները, ասաց, որ այդ պատերազմին մասնակցել են նաև Գավառի պետական համալսարանի ուսանողները: Նրանք գտնվում են համալսարանի ուշադրության կենտրոնում թե՛ բարոյական, թե՛ նյութական առումներով: Սակայն 44-օրյա պատերազմում համալսարանն ունեցավ նաև կորուստներ: Համալսարանի աշխատակազմն իր բարոյական-մարդկային պարտքն է համարում զոհված ուսանողների պատվին անվանակոչել լսարան՝ նվիրված Արցախյան պատերազմի հերոսներին:
Արտահայտվեցին՝ ԳՊՀ ռեկտոր Ռ.Հակոբյանը, ֆակուլտետների դեկանները, գիտխորհրդի այլ անդամներ, որոնք համակարծիք էին արված առաջարկությանը:
Հիմք ընդունելով զեկուցումը, արտահայտված դրական կարծիքները՝
ՈՐՈՇԵՑԻՆ.-1. ԳՊՀ-ում բացել Արցախյան պատերազմի հերոսներին նվիրված լսարան: Բանասիրական ֆակուլտետում վերանորոգված և կահավորված Լսարան-թանգարանը կանվանակոչվի
ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՍ ԱՆՄԱՀ ՀԵՐՈՍՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐՈՎ՝
1. ԱՐՄԵՆ ԳԵՂԱՅՐԻ ԱՂԵԿՅԱՆ
2. ԱՐՏՅՈՄ ՎԻԳԵՆԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ
3. ՌՈՒԲԵՆ ԱՇՈՏԻ ՊՐԱԶՅԱՆ
4. ԷԴՎԱՐԴ ՄԱՆՎԵԼԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ
5.ԶԱՐԶԱՆԴ ՆԵՐՍԻԿԻ ՆԵՐՍԻՍՅԱՆ
6.ԱՐԹՈՒՐ ԻՎԱՆԻ ՎԻՐԱԲՅԱՆ
7.ՆՎԵՐ ՄԵՐՈՒԺԱՆԻ ՀՈՎՍԵՓՅԱՆ
8. ՅՈՒՐԱ ԱՐՏՅՈՄԻ ԶԱԽԱՐՅԱՆ
9.ԳՈՒՐԳԵՆ ԱՎԵՏԻՔԻ ԱՅՎԱԶՅԱՆ
10.ՎԱՀԱԳՆ ՌՈՒԲԵՆԻ ՍԵՅՐԱՆՅԱՆ:

Գիտական խորհրդի նախագահ՝ Ռ. Հակոբյան
Գիտական քարտուղար՝ Թ.Ասոյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 5.

Ք. Գավառ 20.05.2021թ.

2021թ. մայիսի 20-ին կայացավ Գավառի պետական համալսարանի գիտական խորհրդի առցանց նիստը: Նիստին մասնակցում էին գիտխորհրդի 31 անդամներից 25-ը: **Օրակարգ՝**

1. ԳՊՀ-ում զուգակցված /առկա-առցանց/ կրթության որակի ապահովման կառուցակարգերի վերաբերյալ:

/զեկուցող՝ ԳՊՀ ռեկտոր Ռ. Հակոբյան/

2. ԳՊՀ-ում իրականացված դասալսումների արդյունքների և դրանց հաշվառմամբ՝ բարելավման միջոցառումների մասին:

/զեկուցող՝ Ակադեմիական քաղաքականության բաժնի վարիչ Թ. Խաչիկյան/

3.«Գավառի պետական համալսարանի ուսանողների և շրջանավարտների կրթությունը շարունակելու և կարիերայի հնարավորությունների զարգացման քաղաքականության հիմունքներ»-ի նախագծի քննարկում և հաստատում:

/զեկուցող՝ ԳՊՀ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Ն.Կուտուզյան/

4.«Գավառի պետական համալսարանում կրթական վերջնարդյունքներով պայմանավորված մասնագիտական կրթական ծրագրերի մշակման և ուսումնական մոդուլներին հատկացվող կրեդիտների հաշվարկի կարգ»-ի նախագծի քննարկում և հաստատում:

/զեկուցող՝ ԳՊՀ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Ն.Կուտուզյան/

5. ԳՊՀ հեռակա ուսուցման ֆակուլտետի 2021թ. ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի դասընթացների անցկացման ձևաչափի մասին:

/զեկուցող՝ ԳՊՀ ռեկտոր Ռ. Հակոբյան/

6. ԳՊՀ օտար լեզվի և գրականության ամբիոնի վարիչ Գ. Միրիբյանին դոցենտի գիտական կոչում շնորհելու մասին:

/զեկուցող՝ ԳՊՀ գիտական քարտուղար Թ. Ասոյան/

7.ԳՊՀ-ում Արցախյան 44-օրյա պատերազմի ժամանակ զոհված Գևորգ Արշակյանի անվան լսարան բացելու մասին:

/զեկուցող՝ ԳՊՀ ռեկտոր Ռ.Հակոբյան/

8.Ընթացիկ հարցեր

ԼՍԵՑԻՆ.- ԳՊՀ ռեկտոր Ռ. Հակոբյանի զեկուցումը ԳՊՀ-ում զուգակցված /առկա-առցանց/ կրթության որակի ապահովման կառուցակարգերի վերաբերյալ: Զեկուցողը նախ անդրադարձավ համավարակով պայմանավորված՝ Գավառի պետական համալսարանում իրականացված միջոցառումներին: Իրավիճակին համապատասխան միջոցներ էին կիրառվում, մշակվում և ընդունվում էին կանոնակարգեր: Համավարակի մեղմացման հետ կապված՝ 2021-2022 ուսումնական տարում նոր գործելաոճ պետք է կիրառել: Ըստ զեկուցողի՝ այս հանգամանքներում կարելի է զուգակցել առկա և առցանց ուսուցման ձևաչափերը՝ միաժամանակ պահպանելով կրթության բարձր որակն ապահովող կառուցակարգերի պահանջները:

ՈՐՈՇԵՑԻՆ.- 1.ԳՊՀ –ում իրականացնել զուգակցված /առկա-առցանց/ ուսուցման գործընթաց՝ կիրառելով կրթության որակի ապահովման կառուցակարգեր:

ԼՍԵՑԻՆ.- Ակադեմիական քաղաքականության բաժնի վարիչ Թ. Խաչիկյանի զեկուցումը ԳՊՀ-ում իրականացված դասալսումների արդյունքների և դրանց հաշվառմամբ՝ բարելավման միջոցառումների մասին: Զեկուցողը նշեց, որ ակադեմիական քաղաքականության բաժինը պարբերաբար իրականացնում է դասալսումներ տարբեր առարկաների գծով տարբեր դասախոսների մոտ: Մշակվել են գնահատման համապատասխան ձևաչափ և ձևաթուղթ, կատարվում է դասախոսի վարած դասի գնահատում: Դասալսումները քննարկվում են: Ներկայացնելով դասալսումների արդյունքները՝ զեկուցողը ներկայացրեց բարելավման միջոցառումների ծրագիր:

Հարցի շուրջ արտահայտվեցին ուսումնագիտական գծով պրոռեկտոր Ն.Կուտուզյանը, դեկաններ Հ.Ղաջոյանը, Ս.Ամիրխանյանը, Մ.Ավագյանը, Թ.Ասոյանը, որոնք կարևորեցին դասալսումների գործընթացը որպես ուսուցման արդյունավետության ապահովման հիմնական միջոց:

ՈՐՈՇԵՑԻՆ.-1. Ակադեմիական քաղաքականության բաժնի վարիչ Թ. Խաչիկյանի զեկուցումն ընդունել ի գիտություն:

2. ԳՊՀ-ում իրականացված դասալսումների արդյունքները և բարելավման միջոցառումների ծրագիրը տրամադրել ֆակուլտետներին և ամբիոններին՝ համապատասխան միջոցներ ձեռնարկելու հպատակով:

ԼՍԵՑԻՆ.- ԳՊՀ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Ն.Կուտուզյանի զեկուցումը «Գավառի պետական համալսարանի ուսանողների և շրջանավարտների կրթությունը շարունակելու և կարիերայի հնարավորությունների զարգացման քաղաքականության հիմունքներ»-ի նախագծի քննարկման և հաստատման մասին: Զեկուցողը նշեց, որ նշված փաստաթուղթը կարևոր է այնքանով, որքանով ներկայացնում է ԳՊՀ քաղաքականությունը կրթության շարունակման և կարիերայի հնարավորությունների

զարգացման վերաբերյալ: Փաստաթղթի նախագիծը քննարկվել է համալսարանի ստորաբաժանումներում:

Առաջարկվեց հաստատել նշված փաստաթուղթը:

ՈՐՈՇԵՑԻՆ.-Հաստատել «Գավառի պետական համալսարանի ուսանողների և շրջանավարտների կրթությունը շարունակելու և կարիերայի հնարավորությունների զարգացման քաղաքականության հիմունքներ»-ը:

ԼՍԵՑԻՆ.- ԳՊՀ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Ն.Կուտուզյանի զեկուցումը «Գավառի պետական համալսարանում կրթական վերջնարդյունքներով պայմանավորված մասնագիտական կրթական ծրագրերի մշակման և ուսումնական մոդուլներին հատկացվող կրեդիտների հաշվարկի կարգ»-ի նախագծի քննարկման և հաստատման մասին: Զեկուցողը նշեց, որ հաստատման ներկայացված կարգը հնարավորություն է տալիս ուսուցման արդյունավետությունը ապահովել նաև ուսումնական մոդուլներին տրվող կրեդիտների քանակային ճիշտ հաշվարկով: Փաստաթղթի նախագիծը քննարկվել է համալսարանի ստորաբաժանումներում: Առաջարկվեց հաստատել նշված փաստաթուղթը:

ՈՐՈՇԵՑԻՆ.-Հաստատել «Գավառի պետական համալսարանում կրթական վերջնարդյունքներով պայմանավորված մասնագիտական կրթական ծրագրերի մշակման և ուսումնական մոդուլներին հատկացվող կրեդիտների հաշվարկի կարգ»-ը:

ԼՍԵՑԻՆ.- ԳՊՀ ռեկտոր Ռ. Հակոբյանի զեկուցումը ԳՊՀ հեռակա ուսուցման ֆակուլտետի 2021թ. ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի դասընթացների անցկացման ձևաչափի մասին: Զեկուցողը նշեց, որ նպատակահարմար է հեռակա ուսուցման ֆակուլտետի երկրորդ կիսամյակի դասերը ևս անցկացնել հեռավար ձևաչափով՝ նկատի ունենալով, որ համավարակը դեռևս ամբողջապես չի նահանջել, շատ դասախոսներ ռիսկային խմբում են, ուսանողներից շատերը աշխատում են, դասերը հեռավար անցկացնելու դիմումներ են ստացվում նրանց կողմից և այլն:

Հարցի շուրջ արտահայտվեց հեռակա ուսուցման ֆակուլտետի փոխդեկան Մ.Գարեյանը: Նա նույնպես առաջարկեց դասերն անցկացնել առցանց ձևաչափով:

ՈՐՈՇԵՑԻՆ.-1. Հիմք ընդունելով համավարակային իրավիճակը՝ ԳՊՀ հեռակա ուսուցման ֆակուլտետի 2021թ. ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի դասընթացներն անցկացնել առցանց ձևաչափով:

2.Հանձնարարել հեռակա ուսուցման ֆակուլտետի դեկանատին, հաշվի առնելով առցանց ուսուցման առանձնահատկությունները, ուսանողների և դասախոսների շրջանում ապահովել համակողմանի տեղեկատվություն դասընթացների կազմակերպման և անցկացման վերաբերյալ:

ԼՍԵՑԻՆ.- ԳՊՀ գիտական քարտուղար Թ. Ասոյանի զեկուցումը ԳՊՀ օտար լեզվի և գրականության ամբիոնի վարիչ Գ. Միրիբյանին դոցենտի գիտական կոչում շնորհելու մասին: Զեկուցողը նշեց, որ Գ.Միրիբյանի գիտամանկավարժական գործունեության տվյալները համապատասխանում են նրան դոցենտի գիտական կոչում շնորհելու՝ ՀՀ ԿԳՄՍՆ բարձրագույն որակավորման կոմիտեի /ԲՈԿ/ առաջադրած պահանջներին,

ուստի առաջարկեց Գ.Միրիբյանին շնորհել դոցենտի գիտական կոչում և որոշումը ներկայացնել ԲՈԿ-ին:

Կազմվեց հաշվիչ հանձնաժողով և անցկացվեց փակ, գաղտնի քվեարկություն: Քվեարկության արդյունքում գիտխորհրդին ներկա 25 անդամներից կողմ էին քվեարկել 25-ը, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Հիմք ընդունելով քվեարկության արդյունքները՝

ՈՐՈՇԵՑԻՆ.-1. ԳՊՀ օտար լեզվի և գրականության ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների թեկնածու Գ. Միրիբյանին շնորհել դոցենտի գիտական կոչում:

2.ԳՊՀ գիտխորհրդի որոշումը ԳՊՀ օտար լեզվի և գրականության ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների թեկնածու Գ. Միրիբյանին դոցենտի գիտական կոչում շնորհելու մասին ներկայացնել ԲՈԿ՝ հաստատման:

ԼՍԵՑԻՆ.- ԳՊՀ ռեկտոր Ռ.Հակոբյանի զեկուցումը ԳՊՀ-ում Արցախյան 44-օրյա պատերազմի ժամանակ զոհված Գևորգ Արշակյանի անվան լսարան բացելու մասին: Զեկուցողը, ներկայացնելով Արցախյան պատերազմի ընթացքում հայ ժողովրդի ցուցաբերած հերոսական պահվածքի մասին, կարևորեց մեր զոհված հերոսների հիշատակը հավերժացնելու՝ ապրողների պարտավորվածությունը: Գևորգ Արշակյանը գիտակցաբար իր կյանքը զոհեց հանուն իր հայրենիքի և ժողովրդի: Ռ.Հակոբյանն առաջարկեց լսարան անվանակոչել հերոսի անունով:

Հարցի շուրջ արտահայտվեցին դեկաններ Հ.Ղաջոյանը, Ս.Ամիրխանյանը, Մ.Ավագյանը, Թ.Ասոյանը: Նրանք ևս բարձր գնահատեցին հերոսի սխրանքը և հավանություն տվեցին նրա անունով ԳՊՀ-ում լսարան անվանակոչելու:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետում լսարան անվանակոչել Արցախյան 44-օրյա պատերազմում զոհված Գևորգ Արշակյանի անունով:

Գիտական խորհրդի նախագահ՝ Ռ. Հակոբյան
Գիտական քարտուղար՝ Թ.Ասոյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 6.

Ք. Գավառ **30.06.2021թ.**

2021թ. հունիսի 24-ին կայացավ Գավառի պետական համալսարանի գիտական խորհրդի առցանց նիստը: Նիստին մասնակցում էին գիտխորհրդի 31 անդամներից 26-ը: **Օրակարգ՝**

1.ԳՊՀ առկա ուսուցման ֆակուլտետների բակալավրիատի 2021-2025թթ. և մագիստրատուրայի 2021-2023թթ. մասնագիտական կրթական ծրագրերի ուսումնական պլանների փոփոխությունների քննարկման և հաստատման վերաբերյալ:

/զեկուցող՝ ԳՊՀ դեկաններ, ուսումնագիտական գծով պրոռեկտոր/
2.ԳՊՀ առկա ուսուցման ֆակուլտետների բակալավրիատի և մագիստրատուրայի մասնագիտական կրթական ծրագրերի 2021-2022 ուսումնական տարվա մասնագրերի բարելավման ուղիների վերաբերյալ:
/զեկուցողներ՝ ԳՊՀ դեկաններ, ուսումնագիտական գծով պրոռեկտոր/
3.ԳՊՀ առկա և հեռակա ուսուցման ֆակուլտետներում անցկացված հեռավար ուսուցման վերաբերյալ ուսանողների շրջանում անցկացված հարցումների և դրանց արդյունքների վերլուծության ու բարելավման միջոցառումների մասին:
/զեկուցողներ՝ Որակի ապահովման բաժնի վարիչի պաշտոնակատար Ք. Հայրապետյան, Մ.Նախրատյան, դեկաններ, ուսումնագիտական գծով պրոռեկտոր/
4.Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ.- ԳՊՀ դեկաններ Թ.Ասոյանի, Հ.Ղաջոյանի, Ս.Ամիրխանյանի, Մ.Ավագյանի, ուսումնագիտական գծով պրոռեկտոր Ն.Կուտուզյանի զեկուցումները ԳՊՀ առկա ուսուցման ֆակուլտետների բակալավրիատի 2021-2025թթ. և մագիստրատուրայի 2021-2023թթ. մասնագիտական կրթական ծրագրերի ուսումնական պլանների փոփոխությունների քննարկման և հաստատման վերաբերյալ: Զեկուցողները նշեցին, որ ֆակուլտետներում և ամբիոններում աշխատանքներ են տարվել կրթական ծրագրերի ուսումնական պլանների բարելավման ուղղությամբ: Այդ աշխատանքներում ներգրավվել են ամբիոնների դասախոսները: Ն.Կուտուզյանը նշեց, որ ֆակուլտետների դեկանատների հետ իրականացվել են աշխատաժողովներ, որոնց ընթացքում կատարվել են անհրաժեշտ ճշգրտումներ:
ՈՐՈՇԵՑԻՆ.- Հաստատել ԳՊՀ առկա ուսուցման ֆակուլտետների բակալավրիատի 2021-2025թթ. և մագիստրատուրայի 2021-2023թթ. մասնագիտական կրթական ծրագրերի ուսումնական պլանները՝ կատարված փոփոխությունների հաշվառմամբ:
ԼՍԵՑԻՆ.- ԳՊՀ դեկաններ Թ.Ասոյանի, Հ.Ղաջոյանի, Ս.Ամիրխանյանի, Մ.Ավագյանի, ուսումնագիտական գծով պրոռեկտոր Ն.Կուտուզյանի զեկուցումները ԳՊՀ առկա ուսուցման ֆակուլտետների բակալավրիատի և մագիստրատուրայի մասնագիտական կրթական ծրագրերի 2021-2022 ուսումնական տարվա մասնագրերի բարելավման ուղիների վերաբերյալ: Զեկուցողները նշեցին, որ ՄԿԾ 2021-22 ուստարվա մասնագրերում կատարվել են որոշ փոփոխություններ՝ բարելավման նպատակով: Իրականացվել են քննարկումներ:
ՈՐՈՇԵՑԻՆ.-Զեկուցումները ԳՊՀ առկա ուսուցման ֆակուլտետների բակալավրիատի և մագիստրատուրայի մասնագիտական կրթական ծրագրերի 2021-2022 ուսումնական տարվա մասնագրերի բարելավման ուղիների վերաբերյալ ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ.- Զեկուցումներ ԳՊՀ առկա և հեռակա ուսուցման ֆակուլտետներում անցկացված հեռավար ուսուցման վերաբերյալ ուսանողների շրջանում անցկացված հարցումների և դրանց արդյունքների վերլուծության ու բարելավման միջոցառումների մասին: Ք.Հայրապետյանը, Մ.Նախրատյանը շնորհանդեսի ձևաչափով ներկայացրին անցկացված հարցումների արդյունքները և դրանց վերլուծությունը: Նրանք նշեցին, որ ուսանողները հիմնականում գոհ են եղել հեռավար ուսուցման ձևաչափից: Այնուամենայնիվ քիչ չեն եղել առկա ուսուցման կողմնակիցները՝ գնահատելով անմիջական շփման առավելությունները: Ֆակուլտետներում ևս կատարվել են հարցումներ: Պարզվել են նաև որոշ թյուրիմացություններ, որոնք կարճ ժամանակում կարելի է շտկել:

ՈՐՈՇԵՑԻՆ.-1. ԳՊՀ առկա և հեռակա ուսուցման ֆակուլտետներում հեռավար ուսուցման վերաբերյալ ուսանողների շրջանում անցկացված հարցումների և դրանց արդյունքների վերլուծությունը տրամադրել ՏՏ բաժնին և ֆակուլտետներին՝ ուսումնասիրման նպատակով:

2.Հանձնարարել ՏՏ բաժնին և դեկանատներին՝ մշակել և իրականացնել հեռավար ուսուցման հետ կապված բարելավման միջոցառումներ:

Գիտական խորհրդի նախագահ՝ Ռ. Հակոբյան

Գիտական քարտուղար՝ Թ.Ասոյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 7.

Ք. Գավառ **09.07.2021թ.**

2021թ. հուլիսի 9-ին կայացավ Գավառի պետական համալսարանի գիտական խորհրդի առցանց նիստը: Նիստին մասնակցում էին գիտխորհրդի 31 անդամներից 23-ը: **Օրակարգ՝**

1.ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի 2020-2021ուսումնական տարվա ամփոփիչ ատեստավորման արդյունքների, ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների հաշվետվությունների, գործընթացի բարելավման ուղիների վերաբերյալ:

/զեկուցող՝ բանասիրական ֆակուլտետի դեկան Թ. Ասոյան/

2.ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի 2020-2021ուսումնական տարվա ամփոփիչ ատեստավորման արդյունքների, ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների հաշվետվությունների, գործընթացի բարելավման ուղիների վերաբերյալ:

/զեկուցող՝ բնագիտական ֆակուլտետի դեկան Մ. Ավագյան/

3.ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի 2020-2021ուսումնական տարվա ամփոփիչ ատեստավորման արդյունքների, ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների հաշվետվությունների, գործընթացի բարելավման ուղիների վերաբերյալ:

/զեկուցող՝ ՀՄՖ դեկան Հ. Ղաջոյան/

4.ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի 2020-2021ուսումնական տարվա ամփոփիչ ատեստավորման արդյունքների, ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների հաշվետվությունների, գործընթացի բարելավման ուղիների վերաբերյալ:

/զեկուցող՝ տնտեսագիտական ֆակուլտետի դեկան Ս. Ամիրխանյան/

5.ԳՊՀ հեռակա ուսուցման ֆակուլտետի 2020-2021ուսումնական տարվա ամփոփիչ ատեստավորման արդյունքների, ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների հաշվետվությունների, գործընթացի բարելավման ուղիների վերաբերյալ:

/զեկուցող՝ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Ն. Կուտուզյան/

6.Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ.-ԳՊՀ ֆակուլտետների դեկաններ Թ.Ասոյանի, Մ.Ավագյանի, Հ.Ղաջոյանի, Ս.Ամիրխանյանի և պրոռեկտոր Ն.Կուտուզյանի զեկուցումները բանասիրական, բնագիտական, հումանիտար մասնագիտությունների, տնտեսագիտական և հեռակա ուսուցման ֆակուլտետների 2020-2021 ուստարվա ամփոփիչ ատեստավորման գործընթացի մասին: Զեկուցողները նշեցին, որ ամփոփիչ ատեստավորման ամբողջ գործընթացն ընթացել է նախապես մշակված ժամանակացույցին և սահմանված կարգին համապատասխան: Նախապատրաստական աշխատանքները կատարվել են ժամանակին, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարումը հսկվել է գիտական ղեկավարների, ամբիոնների, դեկանատների կողմից, ղեկավար-ուսանող կապն իրականացվել է թե՛ առկա և թե՛ առցանց ձևաչափերով, նշված ժամկետներում անցկացվել են նախապաշտպանությունները: Ընդունված կարգին համապատասխան կազմվել են հանձնաժողովները, պատրաստվել են ատեստավորման համար անհրաժեշտ փաստաթղթերը:

Ատեստավորում անցկացվել է առկա, իսկ հարգելի պատճառներ ունեցող որոշ ուսանողների համար՝ առցանց ձևաչափով: Այնուհետև զեկուցողներն անդրադարձան ատեստավորման արդյունքներին: Ներկայացվեցին հանձնաժողովների նախագահների կարծիքներն ու առաջարկությունները ամփոփիչ ատեստավորման գործընթացի, պաշտպանության ներկայացված թեմաների վերաբերյալ:

ՈՐՈՇԵՑԻՆ.-1.Թ.Ասոյանի զեկուցումը ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի 2020-2021 ուսումնական տարվա ամփոփիչ ատեստավորման արդյունքների, ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների հաշվետվությունների, գործընթացի բարելավման ուղիների վերաբերյալ ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար:

2. Մ.Ավագյանի զեկուցումը ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի 2020-2021ուսումնական տարվա ամփոփիչ ատեստավորման արդյունքների, ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների հաշվետվությունների, գործընթացի բարելավման ուղիների վերաբերյալ ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար:

3. Հ.Ղաջոյանի զեկուցումը ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի 2020-2021ուսումնական տարվա ամփոփիչ ատեստավորման արդյունքների, ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների հաշվետվությունների, գործընթացի բարելավման ուղիների վերաբերյալ ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար:

4.Ս.Ամիրխանյանի զեկուցումը ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի 2020-2021ուսումնական տարվա ամփոփիչ ատեստավորման արդյունքների, ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների հաշվետվությունների, գործընթացի բարելավման ուղիների վերաբերյալ ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար:

5. Ն.Կուտուզյանի զեկուցումը ԳՊՀ հեռակա ուսուցման ֆակուլտետի 2020-2021ուսումնական տարվա ամփոփիչ ատեստավորման արդյունքների, ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների հաշվետվությունների, գործընթացի բարելավման ուղիների վերաբերյալ ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար

Գիտական խորհրդի նախագահ՝ Ռ. Հակոբյան

Գիտական քարտուղար՝ Թ.Ասոյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 8.

Ք. Գավառ **27.08.2021թ.**

2021թ. օգոստոսի 27-ին կայացավ Գավառի պետական համալսարանի գիտական խորհրդի առցանց նիստը: Նիստին մասնակցում էին գիտխորհրդի 31 անդամներից 24-ը: **Օրակարգ՝**

1.ԳՊՀ 2021-2022 ուստարվա նախապատրաստական աշխատանքների, առկա ուսուցման ֆակուլտետներում ուսումնական գործընթացի, հեռակա ուսուցման ֆակուլտետում քննաշրջանի կազմակերպման ձևաչափի, հակահամաճարակային կանոնների խստիվ պահպանման մասին:

/զեկուցող՝ ԳՊՀ ռեկտոր Ռ. Հակոբյան/

2.ԳՊՀ 2021-2022 ուստարվա առաջին կիսամյակի ուսումնական պարապմունքների, քննաշրջանի անցկացման և երկրորդ կիսամյակի մեկնարկի ժամանակացույցի քննարկման և հաստատման մասին:

/զեկուցող՝ ԳՊՀ պրոռեկտոր Ն. Կուտուզյան/

3.Գավառի պետական համալսարանի ուսանողների ուսման վարձը վճարելու և վարձն ամբողջությամբ կամ մասամբ փոխհատուցելու կանոնակարգի փոփոխությունների քննարկում և հաստատում:

/զեկուցող՝ ԳՊՀ պրոռեկտոր Ն. Կուտուզյան/

4.ԳՊՀ-ի և արհեստակցական կազմակերպության միջև կնքված կոլեկտիվ պայմանագրի քննարկման և հաստատման մասին:

/զեկուցողներ՝ ԳՊՀ պրոռեկտոր Ն. Կուտուզյան, Արհեստակցական կագմակերպության նախագահ Լ. Սիրունյան/

5.Գավառի պետական համալսարանի հանրակացարանի կանոնակարգի փոփոխությունների քննարկման և հաստատման մասին:

/զեկուցող՝ ԳՊՀ պրոռեկտոր Ն. Կուտուզյան/

6. Գավառի պետական համալսարանի սկսնակ դասախոսների և աշխատակիցների մենթորության կազմակերպման կարգ-ի քննարկում և հաստատում:

/զեկուցող՝ ԳՊՀ պրոռեկտոր Ն. Կուտուզյան/

7.ԳՊՀ 2021-2022 ուստարվա ուսումնական աշխատանքների հաշվարկի նորմերի քննարկում և հաստատում:

/զեկուցող՝ ԳՊՀ պրոռեկտոր Ն. Կուտուզյան/

8.Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ.- ԳՊՀ ռեկտոր Ռ. Հակոբյանի զեկուցումը ԳՊՀ 2021-2022 ուստարվա նախապատրաստական աշխատանքների մասին: Զեկուցողը նախ անդրադարձավ առկա ուսուցման ֆակուլտետներում ուսումնական գործընթացի կազմակերպման հարցերին: Նա առաջարկեց գիտական խորհրդին, ինչպես միշտ, որոշում կայացնել Գավառի պետական համալսարանում չորեքշաբթի օրվանից մնչև կիրակի օրը՝

ներառյալ, աշխատանքային օրեր հայտարարելու, իսկ երկուշաբթի և երեքշաբթի օրերը՝ ոչ աշխատանքային օրեր սահմանելու մասին՝ պայմանավորված ՀՀ Գեղարքունիքի մարզում բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման, ուսումնական գործընթացի կազմակերպման առանձնահատկություններով, Երևանից և այլ քաղաքներից դասախոսներ հրավիրելու և որակյալ կրթություն ապահովելու անհրաժեշտությամբ: Նա նշեց, որ նոր ուսումնական տարին պետք է սկսել առանց բացթողումների՝ կարգավորված դասացուցակով, դասախոսների և ուսանողների տեղեկացվածությամբ, հաստատված ուսպլաններով, առարկայական թարմացված ծրագրերով և դասախոսություններով: Այնուհետ զեկուցողը ներկայացրեց հեռակա ուսուցման ֆակուլտետում քննաշրջանի կազմակերպման ձևաչափի հետ կապված խնդիրները: Կարևոր նշանակություն տրվեց հակահամաճարակային կանոնների խստիվ պահպանմանը:

Առաջ քաշված հարցերի շուրջ արտահայտվեցին պրոռեկտոր Ն.Կուտուզյանը, դեկաններ Հ. Ղաջոյանը, Ս. Ամիրխանյանը, Մ. Ավագյանը, Թ. Ասոյանը: Նրանք նշեցին, որ ֆակուլտետներում աշխատանքներ են տարվել ուստարին պատշաճ կերպով սկսելու համար: Քննարկումներից հետո գիտխորհուրդը

ՈՐՈՇԵՑԻՆ.-1. Գավառի պետական համալսարանում 2021-2022 ուսումնական տարում չորեքշաբթի օրվանից մնչև կիրակի օրը՝ ներառյալ, հայտարարել աշխատանքային օրեր, իսկ երկուշաբթի և երեքշաբթի օրերը՝ ոչ աշխատանքային օրեր՝ պայմանավորված համալսարանում ուսումնական գործընթացի կազմակերպման առանձնահատկություններով, Երևանից և այլ քաղաքներից դասախոսներ հրավիրելու և որակյալ կրթություն ապահովելու անհրաժեշտությամբ:

2.ԳՊՀ հեռակա ուսուցման ֆակուլտետում երկրոդ կիսամյակի քննաշրջանը կազմակերպել առցանց ձևաչափով:

3.Շարունակել խստիվ պահպանել հակահամաճարակային կանոնները, ապահովել համապատասխան ախտահանող նյութեր:

ԼՍԵՑԻՆ.- ԳՊՀ պրոռեկտոր Ն. Կուտուզյանի զեկուցումը ԳՊՀ 2021-2022 ուստարվա առաջին կիսամյակի ուսումնական պարապմունքների, քննաշրջանի անցկացման և երկրորդ կիսամյակի մեկնարկի ժամանակացույցի քննարկման և հաստատման մասին: Զեկուցողն առաջարկեց անհրաժեշտության դեպքում կիրառել ուսուցման ճկուն մեխանիզմներ: Քննարկման ընթացքում առաջարկություններ ավեցին նշված գործընթացները իրականացնել առկա ձևաչափով՝ անհրաժեշտության դեպքում կիրառելով ուսուցման ճկուն մեխանիզմներ:

ՈՐՈՇԵՑԻՆ.- 1.2021-2022 ուսումնական տարվա դասերը սկսել սեպտեմբերի մեկից՝ առկա ձևաչափով, երկրորդ կիսամյակը սկսել 2022թ. փետրվարի 9-ից, իսկ քննաշրջանը կազմակերպել դասերի ավարտից հետո՝ համապատասխան ժամանակացույցով:

2.Ժամանակացույցում փոփոխություններ կատարել ըստ իրավիճակի և անհրաժեշտության:

ԼՍԵՑԻՆ.- ԳՊՀ պրոռեկտոր Ն. Կուտուզյանի զեկուցումը Գավառի պետական համալսարանի ուսանողների ուսման վարձը վճարելու և վարձն ամբողջությամբ կամ մասամբ փոխհատուցելու կանոնակարգի փոփոխությունների քննարկման և հաստատման մասին: Զեկուցողը ներկայացրեց կանոնակարգում կատարված փոփոխությունները, որոնք քննարկվել են համալսարանի ստորաբաժանումներում: Հաշվի են առնվել արված առաջարկությունները, լրացումներն ու ճշգրտումները:

Հարցի շուրջ արտահայտվեցին ԳՊՀ ռեկտոր Ռ.Հակոբյանը, գլխավոր հաշվապահ Գ. Մուրադյանը: Նրանք նշտեցին, որ կատարված լրամշակումը բխում է ուսանողների շահերից:

Առաջարկվեց հաստատել կանոնակարգում կատարված փոփոխությունները:

ՈՐՈՇԵՑԻՆ.-Հաստատել «Գավառի պետական համալսարանի ուսանողների ուսման վարձը վճարելու և վարձն ամբողջությամբ կամ մասամբ փոխհատուցելու կանոնակարգ»-ը՝ փոփոխություններով:

ԼՍԵՑԻՆ.- ԳՊՀ պրոռեկտոր Ն. Կուտուզյանի և ԳՊՀ արհեստակցական կագմակերպության նախագահ Լ. Սիրունյանի զեկուցումները ԳՊՀ-ի և արհեստակցական կազմակերպության միջև կնքված կոլեկտիվ պայմանագրի քննարկման և հաստատման մասին: Նրանք նշեցին, որ Գավառի պետական համալսարանը և արհեստակցական կազմակերպությունը համագործակցելու երկարամյա փորձ ունեն: Համագործակցությունը ծառայել է համալսարանի ողջ աշխատակազմի շահերին: Առաջարկվեց հաստատել քննարկման դրված փաստաթուղթը:

ՈՐՈՇԵՑԻՆ.-Հաստատել Գավառի պետական համալսարանի և ԳՊՀ արհեստակցական կազմակերպության միջև կնքված կոլեկտիվ պայմանագիրը:

ԼՍԵՑԻՆ.- ԳՊՀ պրոռեկտոր Ն. Կուտուզյանի զեկուցումը Գավառի պետական համալսարանի հանրակացարանի կանոնակարգի փոփոխությունների Գավառի պետական համալսարանի սկսնակ դասախոսների և աշխատակիցների մենթորության կազմակերպման կարգի քննարկման և հաստատման մասին: Զեկուցողը նշեց, որ համալսարանի հանրակացարանի հնարավորությունները կարելի է ավելի նպատակային օգտագործել, ինչի մասին զեկուցվել է ԳՊՀ հոգաբարձուների խորհրդին և անհրաժեշտ համարվել փոփոխություններ կատարել հանրակացարանին վերաբերող կանոնակարգում, որը քննարկվել է համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումներում: Ներկայացվեց նաև հաջորդ կարևոր փաստաթուղթը՝ ԳՊՀ-ում մենթորության կազմակերպման կարգը: Առաջարկվեց հաստատել:

ՈՐՈՇԵՑԻՆ.-1.Հաստատել «Գավառի պետական համալսարանի հանրակացարանի կանոնակարգ»-ը փոփոխություններով:

2.Հաստատել Գավառի պետական համալսարանի սկսնակ դասախոսների և աշխատակիցների մենթորության կազմակերպման կարգը:

ԼՍԵՑԻՆ.- ԳՊՀ պրոռեկտոր Ն. Կուտուզյանի զեկուցումը ԳՊՀ2021-2022 ուստարվա ուսումնական աշխատանքների հաշվարկի նորմերի քննարկում և հաստատում:

Զեկուցողը ներկայացրեց ուսումնական աշխատանքների հաշվարկի նորմերի վերաբերյալ կատարված համեմատական ուսումնասիրությունները: Նկատի են առնվել նաև այլ բուհերի փորձը, ԳՊՀ առանձնահատկությունները:
Հարցի շուրջ ծավալվեց քննարկում, որից հետո առաջարկվեց հաստատել քննարկման արդյունքում որոշված նորմերը:
ՈՐՈՇԵՑԻՆ.-Հաստատել ԳՊՀ 2021-2022 ուստարվա ուսումնական աշխատանքների հաշվարկի նորմերը:

Գիտական խորհրդի նախագահ՝ Ռ. Հակոբյան
Գիտական քարտուղար՝ Թ.Ասոյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 9.

Ք. Գավառ 30.09.2021թ.

2021թ. սեպտեմբերի 30-ին կայացավ Գավառի պետական համալսարանի գիտական խորհրդի նիստը: Նիստին մասնակցում էին գիտխորհրդի 31 անդամներից 22-ը:

Օրակարգ՝

1.Գավառի պետական համալսարանում Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի N 65-Ն հրամանով սահմանված հակահամաճարակային պահանջների կատարման մասին:
/զեկուցող՝ ԳՊՀ ռեկտոր Ռ. Հակոբյան/
2.Կրթության կառավարման տեղեկատվական /EMIS/ համակարգում ԳՊՀ տեղեկատվության լրացման վերաբերյալ:
/զեկուցող՝ ԳՊՀ պրոռեկտոր Ն. Կուտուզյան/
3.ԳՊՀ առկա և հեռակա ուսուցման ֆակուլտետներում բակալավրիատի և մագիստրատուրայի 2022-2023 ուսումնական տարվա մասնագիտական կրթական ծրագրերի ուսման տարեկան վարձաչափերի մասին:
/զեկուցող՝ ԳՊՀ գլխավոր հաշվապահ Գ. Մուրադյան/
4.Ընթացիկ հարցեր

ԼՍԵՑԻՆ.- ԳՊՀ ռեկտոր Ռ. Հակոբյանի զեկուցումը Գավառի պետական համալսարանում Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի N 65-Ն հրամանով սահմանված հակահամաճարակային պահանջների կատարման մասին: Զեկուցողը ներկայացրեց ԳՊՀ-ում իրականացված այն միջոցառումները, որոնք իրականացվել են համավարակի տարածման ժամանակաշրջանում արտակարգ դրության պայմաններում: Այս ժամանակահատվածում արդեն կարևոր դառնում ոչ միայն նախատեսված կանոնները պահել, այլև պատվաստվել: Առողջապահության նախարարի հրամանով աշխատողի ընտրությամբ անհրաժեշտ է կամ պատվաստվել,

կամ պարբերաբար կովիդ-թեստ /ՊՇՌ թեստ/ հանձնել: Պատվաստվելու կամ չպատվաստվելու, այլ թեստ հանձնելու վերաբերյալ պետք է ներկայացնել համապատասխան փաստաթղթեր: Զեկուցողը ներկայացրեց շրջաբերական՝ պատրաստված ըստ նախարարի նշված հրամանի, և առաջարկեց հաստատել:

ՈՐՈՇԵՑԻՆ.-1.Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի N 65-Ն հրամանը՝ հաստատել ԳՊՀ աշխատակազմին ուղղված շրջաբերականը հակահամաճարակային պահանջների և պայմանների կատարման մասին: Հրամանի մասին տեղեկացնել բոլոր աշխատակիցներին:

2.Շրջաբերականի կատարման մասին տեղեկատվությունը և հսկողությունը հանձնարարել ԳՊՀ մարդկային ռեսուրսների կառավարման բաժնին, դեկանատներին, կառուցվածքային մյուս ստորաբաժանումների ղեկավարներին: Գրանցամատյանների վարման համար պատասխանատու անձ նշանակել ՄՌԿ բաժնի վարիչին:

3.Պատվաստման կամ թեստավորման մասին հավաստող փաստաթղթերը ներկայացնել ՄՌԿ բաժին՝ պահպանելով սահմանված ժամկետները:

4.ԳՊՀ գիտխորհրդի հաջորդ նիստին ներկայացնել շրջաբերականի կատարման ընթացքը:

ԼՍԵՑԻՆ.- ԳՊՀ պրոռեկտոր Ն. Կուտուզյան զեկուցումը կրթության կառավարման տեղեկատվական /EMIS/ համակարգում ԳՊՀ տեղեկատվության լրացման մասին: Զեկուցողը նշեց, որ այդ համակարգն առաջարկվել է տեղեկատվության միասնական համակարգ ստեղծելու նպատակով:

ՈՐՈՇԵՑԻՆ.-Ձեռնարկել աշխատանքներ կրթության կառավարման տեղեկատվական /EMIS/ համակարգը լրացնելու նպատակով:

ԼՍԵՑԻՆ.- ԳՊՀ գլխավոր հաշվապահ Գ. Մուրադյանի զեկուցումը ԳՊՀ առկա և հեռակա ուսուցման ֆակուլտետներում բակալավրիատի և մագիստրատուրայի 2022-2023 ուսումնական տարվա մասնագիտական կրթական ծրագրերի ուսման տարեկան վարձաչափերի մասին: Զեկուցողը նշեց, որ ԳՊՀ-ում, համեմատությամբ այլ բուհերի, ուսման վարձաչափերը ցածր են: Ներկա պայմաններում ԳՊՀ-ի լիարժեք գործունեության համար կարիք կա փոքր-ինչ ավելացնել ուսման վարձաչափերը: Նա առաջարկեց որոշ մասնագիտությունների գծով յուրաքանչյուր կիսամյակի համար վարձաչափերը ավելացնել 10.000-ական դրամով;

Հարցի շուրջ արտահայտվեցին պրոռեկտոր Ն. Կուտուզյանը, ՏՖ դեկան Ս.Ամիխանյանը: Նրանք ևս հիմնավորեցին ուսման վարձերի չափավոր բարձրացման անհրաժեշտությունը:

ՈՐՈՇԵՑԻՆ.-1. ԳՊՀ-ում 2022-2023 ուստարում ուսման վարձաչափերը բարձրացնել 10.000-ական դրամով՝ յուրաքանչյուր կիսամյակի համար բակալավրիատի և մագիստրատուրայի բոլոր մասնագիտությունների գծով, բացառությամբ առկա ուսուցման «Իրավագիտություն» և հեռակա ուսուցման «Իրավագիտություն» և «Հաշվապահական հաշվառում» մասնագիտությունների: Նշված երկու մասնագիտությունների համար ուսման վարձաչափերը թողնել անփոփոխ:

Գիտական խորհրդի նախագահ՝ Ռ. Հակոբյան
Գիտական քարտուղար՝ Թ.Ասոյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 10.

Ք. Գավառ 09.10.2021թ.

2021թ. հոկտեմբերի 9-ին կայացավ Գավառի պետական համալսարանի գիտական խորհրդի նիստը: Նիստին մասնակցում էին գիտխորհրդի 31 անդամներից 26-ը: **Օրակարգ՝**

1.ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի 2020-2021 ուսումնական տարվա գործունեության հաշվետվության և 2021-2022 ուսումնական տարվա զարգացման հայեցակարգի ներկայացում:

/զեկուցող՝ ԲՖ դեկան Թ. Ասոյան/

2.ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի 2020-2021 ուսումնական տարվա գործունեության հաշվետվության և 2021-2022 ուսումնական տարվա զարգացման հայեցակարգի ներկայացում:

/զեկուցող՝ ԲՆՖ դեկան Մ. Ավագյան/

3.ՀՀ առողջապահության նախարարի թիվ 65-Ն հրամանի կատարման մասին ԳՊՀ գիտական խորհրդի 2021թ. սեպտեմբերի 30-ի շրջաբերականի կատարման ընթացքի վերաբերյալ:

/զեկուցողներ՝ ԳՊՀ դեկաններ, կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներ/

4. Ընթացիկ հարցեր

ԼՍԵՑԻՆ.- ԲՖ դեկան Թ. Ասոյանի հաշվետվությունը ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի 2020-2021 ուսումնական տարվա գործունեության և 2021-2022 ուսումնական տարվա զարգացման հայեցակարգի մասին: Զեկուցողը նշեց, որ 2020-2021 ուստարվա աշխատանքները ևս անցել են համավարակային պայմաններում, որը ստիպում էր ձևավորել աշխատանքային նոր պայմաններ: Այնուհետև զեկուցողն անդրադարձավ ընդունելության, առաջադիմության, կրթական ծրագրերի զարգացման, կրթական միջավայրի արդիականացման, կրթական ռեսուրսների և օժանդակ միջոցների հարցերին, ամբիոններում իրականացվող գիտահետազոտական աշխատանքներին, կրթության որակին, ուսանողական ինքնակառավարման մարմինների հետ տարվող աշխատանքներին և այլ խնդիրների: Ուշադրություն հրավիրվեց այն հանգամանքի վրա, որ անմիջական շփման բացակայությունը հնարավորություն չի տալիս լիարժեք համագործակցել ուսումնական հաստատությունների, մշակութային օջախների հետ: Այնուամենայնիվ

առցանց ձևաչափով աշխատանքն էլ իր առավելություններն ունի հատկապես գիտաժողովների, քննարկումների դեպքերում:
Զեկուցողը ներկայացրեց 2021-2022 ուստարվա զարգացման հայեցակարգը:
ՈՐՈՇԵՑԻՆ.- 1. ԲՖ դեկան Թ. Ասոյանի հաշվետվությունը ընդունել ի գիտություն և ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի 2020-2021 ուսումնական տարվա գործունեությունը գնահատել բավարար:
2.Հավանություն տալ ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի 2021-2022 ուսումնական տարվա զարգացման հայեցակարգին:
ԼՍԵՑԻՆ.- ԲՆՖ դեկան Մ. Ավագյանի հաշվետվությունը ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի 2020-2021 ուսումնական տարվա գործունեության և 2021-2022 ուսումնական տարվա զարգացման հայեցակարգի մասին: Զեկուցողը նշեց, որ հիմք ընդունելով ԳՊՀ ռազմավարական ծրագրի հիմնադրույթները և ԲՆՖ գործողությունների պլանը՝ բնագիտական ֆակուլտետում որոշակի աշխատանքներ են իրականացվել ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացման ուղղությամբ: Պայմանավորված իրավիճակով՝ ձեռնարկվել են հակահամաճարակային միջոցառումներ, կիրառվել է ուսուցման առցանց ձևաչափը: Ֆակուլտետում պարբերաբար հրավիրվել են խորհրդի նիստեր, քննարկվել են ուսումնական գործընթացին վերաբերող բազմաթիվ հարցեր, որոնք ուղղված են կրթական ծրագրերի արդիականացմանը, կամընտրական դասընթացների վերանայմանը, նոր առարկաների ներդրմանը: Այնուհետև Մ.Ավագյանն անդրադարձավ ընդունելությանը, ուսանողների շարժին, առաջադիմությանը, կրթական ծրագրերի բարեփոխմանը, ատեստավորմանը, միջոցառումներին և ֆակուլտետում կատարված այլ աշխատանքներին:
Մ.Ավգյանը ներկայացրեց ֆակուլտետի 2021-2022 ուստարվա զարգացման հայեցակարգը:
ՈՐՈՇԵՑԻՆ.- 1. ԲՆՖ դեկան Մ. Ավագյանի հաշվետվությունը ընդունել ի գիտություն և ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի 2020-2021 ուսումնական տարվա գործունեությունը գնահատել բավարար:
2.Հավանություն տալ ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի 2021-2022 ուսումնական տարվա զարգացման հայեցակարգին:
ԼՍԵՑԻՆ.-ԳՊՀ դեկանների, կառուցվածքային մյուս ստորաբաժանումների ղեկավարների զեկուցումները ՀՀ առողջապահության նախարարի թիվ 65-Ն հրամանի կատարման մասին ԳՊՀ գիտական խորհրդի 2021թ. սեպտեմբերի 30-ի շրջաբերականի կատարման ընթացքի վերաբերյալ: Զեկուցողները նշեցին, որ ՀՀ առողջապահության նախարարի նշված հրամանը քննարկվել ԳՊՀ գիտխորհրդի նախորդ նիստում և ընդունվել է շրջաբերական կատարողականի վերաբերյալ ու հղվել ԳՊՀ կառուցվածքային ստորաբաժանումներին: Զեկուցողները ներկայացրին այն միջոցառումները, որոնք իրականացվել են ԳՊՀ –ում՝ համաձայն շրջաբերականի:

ՈՐՈՇԵՑԻՆ.-ԳՊՀ դեկանների, կառուցվածքային մյուս ստորաբաժանումների ղեկավարների զեկուցումներն ընդունել ի գիտություն:

Գիտական խորհրդի նախագահ՝ Ռ. Հակոբյան

Գիտական քարտուղար՝ Թ.Ասոյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 11.

Ք. Գավառ 16.10.2021թ.

2021թ. հոկտեմբերի 16-ին կայացավ Գավառի պետական համալսարանի գիտական խորհրդի նիստը: Նիստին մասնակցում էին գիտխորհրդի 31 անդամներից 24-ը: **Օրակարգ՝**

1.ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի 2020-2021 ուսումնական տարվա գործունեության հաշվետվության և 2021-2022 ուսումնական տարվա զարգացման հայեցակարգի ներկայացում:

/զեկուցող՝ ՀՄՖ դեկան՝ Հ.Ղաջոյան/

2.ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի օտար լեզվի և գրականության ամբիոնի վարիչի ընտրություն:

/զեկ.՝ ԳՊՀ պրոռեկտոր Ն.Կուտուզյան/

3.Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ.- ՀՄՖ դեկան Հ. Ղաջոյանի հաշվետվությունը ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի 2020-2021 ուսումնական տարվա գործունեության և 2021-2022 ուսումնական տարվա զարգացման հայեցակարգի մասին: Զեկուցողը նշեց, որ 2020-2021 ուսումնական տարին անցել է համավարակով պայմանավորված ոչ ստանդարտ պայմաններում: Կազմակերպական առումով տարբերություններ կային կիսամյակների միջև. մի դեպքում դասերն ու քննություններն անցկացվեցին միայն առցանց ձևաչափով, իսկ մյուս դեպքում՝ մեծ մասամբ զուգակցված: Դեր խաղաց նաև Արցախյան 44-օրյա պատերազմը: Չնայած դժվարություններին՝ ձախողումներ չեն եղել: Եղել են թերություններ՝ կապված տեխնիկայի, դասախոսների առողջական վիճակի հետ կապված, բայց դրանք էական նշանակություն չեն ունեցել՝ շնորհիվ ճկուն դասացուցակի, փոխհամագործակցության և արագ կողմնորոշման: Այնուհետև զեկուցողը հանգամանորեն ներկայացրեց ընդունելության, առաջադիմության, կրթական ծրագրերի բարելավման, գիտահետազոտական աշխատանքների, միջոցառումների վերաբերյալ տվյալներ: Հ.Ղաջոյանը ներկայացրեց 2021-2022 ուստարվա զարգացման հայեցակարգը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- 1. ՀՄՖ դեկան Մ. Ղաջոյանի հաշվետվությունը ընդունել ի գիտություն և ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի 2020-2021 ուսումնական տարվա գործունեությունը գնահատել բավարար:

2.Հավանություն տալ ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի 2021-2022 ուսումնական տարվա զարգացման հայեցակարգին:

ԼՍԵՑԻՆ.- ԳՊՀ պրոռեկտոր Ն.Կուտուզյանի զեկուցումը ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի օտար լեզվի և գրականության ամբիոնի վարիչի ընտրության գործընթացի մասին: Նա նշեց, որ լրացել էր օտար լեզվի և գրականության ամբիոնի վարիչի պաշտոնում Գայանե Աշոտի Միրիբյանի պաշտոնավարման ծամկետը, ուստի գործող կարգի համաձայն՝ հայտարարություն էր տրվել ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար մրցույթ անցկացնելու մասին: Մրցույթին մասնակցության հայտ է ներկայացրել բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, օտար լեզվի և գրականության ամբիոնի դասախոս, նույն ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար Գայանե Աշոտի Միրիբյանը: Նշվեց նաև, որ Գ.Միրիբյանը ներկայացրել է պահանջվող փաստաթղթերը:

Հարցի շուրջ արտահայտվեց բանասիրական ֆակուլտետի դեկան Թ.Ասոյանը: Նա ասաց, որ Գ.Միրիբյանը թե՛ իբրև դասախոս և թե՛ իբրև ամբիոնի վարիչ աշխատելու ընթացքում իրեն դրսևորել է լավագույն կողմերով և արժանի է ամբիոնի վարիչի պաշտոնին: Առաջարկվեց կազմել հաշվիչ հանձնաժողով և կազմակերպել փակ, գաղտնի քվեարկություն: Հանձնաժողովի կազմը՝ Ամիրխանյան Ս. /նախագահ/, Խաչիկյան Թ./քարտուղար/, Ղուլոյան Հակոբ/անդամ/: Քվեարկության մասնակիցների քանակը՝ 24: Քվեարկության արդյունքները՝ կողմ՝ 24, դեմ՝ 0:

Առաջարկվեց հաստատել քվեարկության արդյունքները:

ՈՐՈՇԵՑԻՆ.- 1.Հիմք ընդունելով փակ, գաղտնի քվեարկության արդյունքները՝ բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Գայանե Աշոտի Միրիբյանին ընտրել որպես բանասիրական ֆակուլտետի օտար լեզվի և գրականության ամբիոնի վարիչ:

2.ԳՊՀ գիտական խորհրդի որոշումը բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Գայանե Աշոտի Միրիբյանին բանասիրական ֆակուլտետի օտար լեզվի և գրականության ամբիոնի վարիչ ընտրելու մասին ներկայացնել ԳՊՀ ռեկտորին՝ հրամանագրելու և աշխատանքային պայմանագիր կնքելու նպատակով:

Գիտական խորհրդի նախագահ՝ Ռ. Հակոբյան

Գիտական քարտուղար՝ Թ.Ասոյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 12.

Ք. Գավառ 23.10.2021թ.

2021թ. հոկտեմբերի 23-ին կայացավ Գավառի պետական համալսարանի գիտական խորհրդի առցանց նիստը: Նիստին մասնակցում էին գիտխորհրդի 31 անդամներից 24-ը: **Օրակարգ՝**

1.ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի 2020-2021 ուսումնական տարվա գործունեության հաշվետվության և 2021-2022 ուստարվա զարգացման հայեցակարգի ներկայացում:

/զեկուցող՝ ԳՊՀ ՏՖ փոխդեկան Մ. Հերգնյան/

2.ԳՊՀ որակի ապահովման բաժնի 2020-2021 ուսումնական տարվա գործունեության հաշվետվության և 2021-2022 ուստարվա զարգացման հիմնական ուղղությունների ներկայացում:

/զեկուցող՝ ԳՊՀ ՈԱԲ վարիչի պաշտոնակատար Ք. Հայրապետյան/

3.«Գավառի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության փոփոխությունների ներկայացում և Գավառի պետական համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներից բուհի հոգաբարձուների խորհրդի անդամների ընտրություն:

/զեկուցող՝ ԳՊՀ ռեկտոր Ռ. Հակոբյան, ԳՊՀ դեկաններ/

4.Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ.- ՏՖ փոխդեկան Մ. Հերգնյանի հաշվետվությունը ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի 2020-2021 ուսումնական տարվա գործունեության և 2021-2022 ուսումնական տարվա զարգացման հայեցակարգի մասին: Զեկուցողը նշեց, որ ֆակուլտետում իրականացվում է զարգացման հայեցակարգի գործողությունների պլանը, որի միջոցով գնահատվում են կատարված աշխատանքները, և դրանց հիման վրա ծրագրվում են հաջորդ փուլի գործողությունները: Ներկայացնելով ուսանողական համակազմի հետ կապված հարցերը՝ նշվեց, որ ֆակուլտետի

առաջադիմությունը կազմել է 82,7 տոկոս: Ֆակուլտետում լուրջ ուշադրություն է դարձվում ուսանողների քաղաքացիական կրթությանը, առողջ ապրելակերպին, մարդու իրավունքների և ժողովրդավարության հարցերին: Դեկանատը զբաղվում է նաև ուսանողների սոցիալական խնդիրներով և միջոցներ ձեռնարկում նրանց աջակցելու համար: Զեկուցողը կարևորեց գործատուների հետ համագործակցային կապերի ակտիվացումը, որը նպաստում է ուսանողների մասնագիտական հմտությունների կատարելագործմանը: Ներկայացվեցին հայեցակարգային խնդիրների ուղղությամբ կատարված աշխատանքները, ՄԿԾ-ներում կատարված փոփոխությունները ու բարելավման գործընթացը, դրանց իրականացման համար անհրաժեշտ ուսումնամեթոդական ռեսուրսները: Զեկուցողն անդրադարձավ ամփոփիչ ատեստավորմանը, ամբիոններում իրականացվող հետազոտական աշխատանքներին, մրջոցառումների, ուսանողների հետ տարվող աշխատանքներին: Մ. Հերգնյանը ներկայացրեց նաև 2021-2022 ուստարվա զարգացման հայեցակարգը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- 1. ՏՖ փոխդեկան Մ. Հերգգնյանի հաշվետվությունը ընդունել ի գիտություն և ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի 2020-2021 ուսումնական տարվա գործունեությունը գնահատել բավարար:

2.Հավանություն տալ ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի 2021-2022 ուսումնական տարվա զարգացման հայեցակարգին:

ԼՍԵՑԻՆ.- ԳՊՀ ՈԱԲ վարիչի պաշտոնակատար Ք. Հայրապետյանի հաշվետվությունը 2020-2021 ուսումնական տարվա գործունեության և 2021-2022 ուսումնական տարվա զարգացման հիմնական ուղղությունների մասին: Զեկուցողը նշեց, որ 2020-2021 ուստարում ՈԱԲ-ը հետևողական աշխատանքներ է տարել համալսարանում կրթության որակի ապահովման նոր կառուցակարգերի ներդրման, գործող ընթացակարգերի բարելավման, որակի վերահսկողության կառուցակարգերի հստակ կիրառման և դրանց արդյունավետության բարձրացման ուղղությամբ: Բուհի կրթության որակի ապահովման գործընթացին մասնակցել են ներքին շահառուները և արտաքին շահակիցները: Վերանայվել և հստակեցվել են բաժնի աշխատակիցների պարտականություններն ու իրավասությունները: Իրականացվել է առաջատար բուհերի կրթության որակի ապահովման համակարգերի համեմատական վերլուծություն: Բարեփոխվել են կրթության որակի ներքին գնահատման հարցաթերթերը, մշակվել և գործածության մեջ է դրվել 5 նոր հարցաթերթ: Այնուհետև զեկուցողն անդրադարձավ անցկացված հարցումների վերլուծություններին:

Ք.Հայրապետյանը ներկայացրեց նաև որակի ապահովման բաժնի 2021-2022 ուստարվա զարգացման հիմնական ուղղությունները:

ՈՐՈՇԵՑԻՆ.- 1.ԳՊՀ ՈԱԲ վարիչի պաշտոնակատար Ք.Հայրապետյանի հաշվետվությունը ընդունել ի գիտություն և 2020-2021 ուսումնական տարվա գործունեությունը գնահատել բավարար:

2. Հավանություն տալ ԳՊՀ որակի ապահովման բաժնի 2021-2022 ուսումնական տարվա զարգացման հիմնական ուղղություններին:

ԼՍԵՑԻՆ.-ԳՊՀ ռեկտոր Ռ. Հակոբյանի, ԳՊՀ դեկանների զեկուցումները .«Գավառի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության փոփոխությունների և Գավառի պետական համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներից բուհի հոգաբարձուների խորհրդի անդամների ընտրության մասին: Ռ.Հակոբյանն ասաց, որ ձևավորվում է ԳՊՀ հոգաբարձուների խորհուրդ որոշակի համամասնությամբ: Այդ խորհրդում պետք է լինեն ներկայացուցիչներ նաև համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմից, ուստի պետք է առաջարկել խորհրդի անդամների թեկնածություններ: Առաջարկվեցին ֆակուլտետների խորհուրդների ընտրած անձանց՝ Հրանուշ Հակոբյանի, Աշխունջ Պողոսյանի, Վիկտոր Կատվալյանի և Անդրանիկ Հովհաննիսյանի թեկնածությունները:
Հարցի շուրջ արտահայտվեցին դեկաններ Հ.Ղաջոյանը, Ս.Ամիրխանյանը, Մ.Ավագյանը և Թ.Ասոյանը: Նրանք նշեցին, որ առաջադրված թեկնածությունները արժանի են լինելու հոգաբարձուների խորհրդի անդամներ:
Առաջարկվեց հավանություն տալ նշված թեկնածուներին:
ՈՐՈՇԵՑԻՆ.- ԳՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներից ԳՊՀ հոգաբարձուների խորհրդի անդամներ առաջադրել հետևյալ դասախոսներին.
1.Հակոբյան Հրանուշ – ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի իրավագիտության ամբիոնի դասախոս, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
2. Կատվալյան Վիկտոր-ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության ամբիոնի դասախոս, բանասիրական գիտությունների դոկտոր, դոցենտ
3.Հովհաննիսյան Անդրանիկ-ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի ինֆորմատիկայի և Ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի դասախոս, տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ
4.Պողոսյան Աշխունջ - ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի հասարակական գիտությունների ամբիոնի դասախոս, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
5.Մարգարյան Հասմիկ՝ ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի հաշվապահական հաշվառման ամբիոնի դասախոս

Գիտական խորհրդի նախագահ՝ Ռ. Հակոբյան
Գիտական քարտուղար՝ Թ.Ասոյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 13.

Քաղաք Գավառ **12.11.2021թ.**

2021թ. նոյեմբերի 12-ին կայացավ Գավառի պետական համալսարանի գիտական խորհրդի առցանց նիստը: Նիստին մասնակցում էին գիտխորհրդի 31 անդամներից 25-ը: **Օրակարգ՝**

1. ԳՊՀ հեռակա ուսուցման ֆակուլտետի 2020-2021 ուսումնական տարվա գործունեության հաշվետվության և 2021-2022 ուստարվա զարգացման հայեցակարգի ներկայացում:

/զեկուցող՝ ԳՊՀ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Ն. Կուտուզյան/

2.ԳՊՀ ուսումնագիտական աշխատանքների հաշվետվության և 2021-2022 ուստարվա զարգացման հիմնական ուղղությունների ներկայացում:

/զեկուցող՝ ԳՊՀ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Ն. Կուտուզյան/

3. Գավառի պետական համալսարանում ս.թ. նոյեմբերի 15-ից հետո առկա ուսուցման ֆակուլտետներում ուսումնական գործընթացի կազմակերպման ձևաչափի մասին:

/զեկուցող՝ ԳՊՀ ռեկտոր Ռ. Հակոբյան/

4. Ընթացիկ հարցեր

ԼՍԵՑԻՆ.- ԳՊՀ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Ն. Կուտուզյանի զեկուցումը ԳՊՀ հեռակա ուսուցման ֆակուլտետի 2020-2021 ուսումնական տարվա գործունեության և 2021-2022 ուստարվա զարգացման հայեցակարգի մասին: Զեկուցողը նշեց, որ 2021 ուստարում, պայմանավորված համավարակի հետևանքով հայտարարված արտակարգ դրությամբ, դասերը և քննաշրջանները, լուծարքները, խորհրդատվությունները, մեթոդական աջակցության ծրագրերը իրականացվել են առցանց ձևաչափով: Բոլոր գործընթացների համար ապահովվել են փաստաթղթային հիմքերը, նախագծվել և կիրառվել են մի շարք էլեկտրոնային ուսուցման հարթակներ: Պահպանվել են ուսուցման գործընթացն անխափան ապահովող բոլոր միջոցները: Այնուհետև զեկուցողը հանգամանորեն ներկայացրեց ուսանողական համակազմի հետ կապված տվյալները, ավարտական աշխատանքների կատարման ընթացքը, պրոֆեսորադասախոսական կազմի նոր համալրումները, ուսպլանների շարունակական թարմացման ընթացքը, մշտադիտարկումները և այլն:

Ն.Կուտուզյանը ներկայացրեց նաև ԳՊՀ հեռակա ուսուցման ֆակուլտետի 2022 ուստարվա զարգացման հայեցակարգը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- ԳՊՀ պրոռեկտոր Ն.Կուտուզյանի հաշվետվությունն ընդունել ի գիտություն և ԳՊՀ հեռակա ուսուցման ֆակուլտետի 2020-2021 ուսումնական տարվա գործունեությունը գնահատել բավարար:
2.Հավանություն տալ ԳՊՀ հեռակա ուսուցման ֆակուլտետի 2021-2022 ուսումնական տարվա զարգացման հայեցակարգին:
ԼՍԵՑԻՆ.- ԳՊՀ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Ն. Կուտուզյանի զեկուցումը ԳՊՀ 2020-2021 ուստարվա ուսումնագիտական աշխատանքների և 2021-2022 ուստարվա զարգացման հիմնական ուղղությունների մասին: Զեկուցողը նշեց, որ 2020-2021 ուստարում համալսարանն առաջնորդվել է «Կրթությունը՝ լույսի ճանապարհ» կարգախոսով: Ուսումնական տարվա ընթացքում աշխատանքներն իրականացվել են հախապես մշակված գործողությունների պլանին համապատասխան: Դրանք ուղղված են եղել ԳՊՀ ռազմավարական ծրագրով նախատեսված ուղղություններով տարվող աշխատանքների արդյունավետության բարձրացմանը: Ներկայացվեցին ուսանողական համակազմի համալրման, ուսանողների առաջադիմության ցուցանիշները, տվյալներ շրջանավարտների, դասախոսական կազմի մասին: Այնուհետև զեկուցողը հանգամանորեն ներկայացրեց 2020-2021 ուստարում իրականացված աշխատանքներն ըստ ռազմավարական գերակա ուղղությունների:
Ն.Կուտուզյանը ներկայացրեց 2021-2022 ուստարում ԳՊՀ ուսումնագիտական գործունեության զարգացման ուղղությունները՝ նշելով, որ նոր ուստարում որդեգրվել «Կրթությունը՝ զարգացման ճանապարհ» կարգախոսը:
ՈՐՈՇԵՑԻՆ.- ԳՊՀ պրոռեկտոր Ն.Կուտուզյանի հաշվետվությունն ընդունել ի գիտություն և ԳՊՀ 2020-2021 ուսումնական տարվա ուսումնագիտական գործունեությունը գնահատել բավարար:
2.Հավանություն տալ ԳՊՀ 2021-2022 ուսումնական տարվա ուսումնագիտական գործունեությանը զարգացման հիմնական ուղղություններին:
ԼՍԵՑԻՆ.- ԳՊՀ ռեկտոր Ռ. Հակոբյանի զեկուցումը Գավառի պետական համալսարանում ս.թ. նոյեմբերի 15-ից հետո առկա ուսուցման ֆակուլտետներում ուսումնական գործընթացի կազմակերպման ձևաչափի մասին: Զեկուցողը ներկայացրեց ուսումնական գործընթացը սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին: Նշվեց, որ բակալավրիատում նախապես որոշված առկա ձևաչափով ուսուցումը հնարավոր չեղավ ամբողջապես իրականացնել՝ կապված համավարակի բռնկման հետ, որն առաջինը արտահայտվեց հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետում: Իրավիճակին համապատասխան՝ ձեռք առնվեցին միջոցներ՝ ցուցաբերելու ճկուն գործելակերպ, համադրելու ուսուցման տարբեր ձևաչափեր: Դասերը կազմակերպվում էին նաև ըստ ուսանողների դիմումների՝ հաշվի առնելով առողջության մասին բժշկական տեղեկանքները: Իրավիճակի կայունացումը այնուհետև թույլ է տալիս կիրառել ուսուցման առկա ձևաչափը: Դա պայմանավորված է նաև նրանով, հեռավար ուսուցման պարագայում գործնական աշխատանքների անցկացումը հնարավոր չէր, ուստի նոյեմբերի 15-ից հետո կարելի է առկա ձևաչափով

անցկացնել գործնական պարապմունքները: Զեկուցողն առաջարկեց նոյեմբերի 15-ից սկսած՝ մնացած դասաժամերն անցկացնել համալսարանում:
Հարցի շուրջ ծավալվեց քննարկում: Արտահայտվեցին Ն.Կուտուզյանը, Հ.Ղաջոյանը, Մ.Ավագյանը, Հ.Ղուլոյանը: Նրանք ընդունեցին արված առաջարկը՝ նկատի ունենալով նաև այն, որ ուսանողների մեծ մասը ցանկանում է դասերն անցկացնել համալսարանում:
ՈՐՈՇԵՑԻՆ.-1. Հիմք ընդունելով թե՛ դասախոսների, թե՛ ուսանողների մեծ մասի ցանկությունը, համավարակային իրավիճակի կայունացման դրական միտումները՝ ս.թ. նոյեմբերի 15-ից առկա բակալավրիատի դասերն անցկացնել առկա ձևաչափով:
2.Հանձնարարել դեկանատներին ուսանողների շրջանում ապահովել անհրաժեշտ տեղեկատվություն դասերի անցկացման ձևաչափի և հակահամաճարակային կանոնների պահպանման վերաբերյալ:

Գիտական խորհրդի նախագահ՝ Ռ. Հակոբյան
Գիտական քարտուղար՝ Թ.Ասոյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 14.

Ք. Գավառ 19.11.2021թ.

2021թ. նոյեմբերի 19-ին կայացավ Գավառի պետական համալսարանի գիտական խորհրդի առցանց նիստը: Նիստին մասնակցում էին գիտխորհրդի 31 անդամներից 23-ը: **Օրակարգ՝**
1. ԳՊՀ արտաքին կապերի և լրատվության բաժնի 2020-2021 ուսումնական տարվա գործունեության հաշվետվության և 2021-2022 ուստարվա զարգացման հայեցակարգի ներկայացում:
/զեկուցող՝ ԳՊՀ արտաքին կապերի և լրատվության բաժնի վարիչ Լ. Թոռչյան/
2. 2020-2021 ուսումնական տարվա ԳՊՀ ֆինանսատնտեսական գործունեության հաշվետվության և 2021-2022 ուստարվա զարգացման հայեցակարգի ներկայացում:
/զեկուցող՝ ԳՊՀ գլխավոր հաշվապահ Գ. Մուրադյան/
3. Ընթացիկ հարցեր
ԼՍԵՑԻՆ.-ԳՊՀ արտաքին կապերի և լրատվության բաժնի վարիչ Լ. Թոռչյանի զեկուցումը ԳՊՀ արտաքին կապերի և լրատվության բաժնի 2020-2021 ուսումնական տարվա գործունեության և 2021-2022 ուստարվա զարգացման հայեցակարգի մասին:
Զեկուցողն ասաց, որ նշված ուսումնական տարում շարունակվել են աշխատանքները տարբեր ձևաչափերով արտաքին կապերի ապահովման և բուհի միջազգայնացման ուղղությամբ՝ անկախ ստեղծված համավարակային և պատերազմական

պայմաններից: Վերակնքվել են մի շարք պայմանագրեր: Մասնավորապես կարևոր համագործակցային ծրագրեր իրականացվեցին տնտեսագիտության ոլորտում: Համագործակցության հուշագրեր են կնքվել ինչպես կենսարդյունաբերության գիտության և տեխնոլոգիաների գերազանցության հայկական ցանցի ձևավորման շրջանակում, այնպես այլ հարթակներում: Համալսարանի պրոֆեսորադասախոսական և վարչական անձնակազմերը մասնակցել են միջազգային կոնֆերանսների, աշխատաժողովների, սեմինարների և վեբինարների: Հաշվետու տարում բաժինն իրականացրել է տարաբնույթ տեղեկատվական, ուսուցողական, ճանաչողական ծրագրեր ու միջոցառումներ, լուսաբանել բուհի կրթական, գիտահետազոտական, ուսումնամեթոդական գործունեության լուսաբանում՝ ապահովելով համագործակցություն գործընկեր կազմակերպությունների, ներքին ու արտաքին շահակիցների հետ: Աշխատանքներ են տարվել էլեկտրոնային հարթակներում:

Լ.Թոռչյանը ներկայացրեց 2021-2022 ուստարում ԳՊՀ արտաքին կապերի և լրատվության բաժնի գործունեության և համալսարանի միջազգային համագործակցության զարգացման հիմնական ուղղությունները:

ՈՐՈՇԵՑԻՆ.- ԳՊՀ արտաքին կապերի և լրատվության բաժնի վարիչ Լ. Թոռչյանի զեկուցումը ԳՊՀ արտաքին կապերի և լրատվության բաժնի 2020-2021 ուսումնական տարվա գործունեության մասին ընդունել ի գիտություն և ԳՊՀ 2020-2021 ուսումնական տարվա գործունեությունը գնահատել բավարար:

2.Հավանություն տալ ԳՊՀ արտաքին կապերի և լրատվության բաժնի 2021-2022 ուսումնական տարվա գործունեությանը զարգացման հիմնական ուղղություններին:

ԼՍԵՑԻՆ.- ԳՊՀ գլխավոր հաշվապահ Գ. Մուրադյանի զեկուցումը 2020-2021 ուսումնական տարվա ԳՊՀ ֆինանսատնտեսական գործունեության և 2021-2022 ուստարվա զարգացման հայեցակարգի մասին: Զեկուցողը նշեց, որ ԳՊՀ տարեկան բյուջեի նախագիծը կազմվում է ըստ ԳՊՀ ռազմավարական ծրագրի նպատակների, ուստի ֆինանսական գործունեությունը ներկայացրեց ըստ համալսարանի զարգացման և բարեփոխման հայեցակարգային ուղղությունների: Ներկայացվեցին կատարված ծախսերը ուսումնական, գիտահետազոտական, կրթական միջավայրի արդիականացման, ուսանողների հետ տարվող աշխատանքների, վարչարարության, արտաքին կապերի և համագործակցության և այլ ոլորտներում: Այնուհետև անդրադարձավ 2021թ. բյուջեի կատարողականի և 2022 թ. բյուջեի նախագծի վերլուծությանը:

Իրականացվել են շինվերանորոգման աշխատանքներ: Կապիտալ վերանորոգվել է գլխավոր մասնաշենքի տանիքը, կոսմետիկ վերանորոգման են ենթարկվել մի շարք լսարաններ, համալրվել է գրադարանային ֆոնդը:

ՈՐՈՇԵՑԻՆ.-1. ԳՊՀ գլխավոր հաշվապահ Գ. Մուրադյանի զեկուցումը 2020-2021 ուսումնական տարվա ԳՊՀ ֆինանսատնտեսական գործունեության մասին ընդունել ի գիտություն և կատարված աշխատանքը գնահատել բավարար:

2.Հավանություն տալ 2021-2022 ուստարվա ֆինանսատնտեսական զարգացման հայեցակարգին:

Գիտական խորհրդի նախագահ՝ Ռ. Հակոբյան
Գիտական քարտուղար՝ Թ.Ասոյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 15.

Ք. Գավառ **18.12.2021թ.**

2021թ. դեկտեմբերի 18-ին կայացավ Գավառի պետական համալսարանի գիտական խորհրդի առցանց նիստը: Նիստին մասնակցում էին գիտխորհրդի 31 անդամներից 23-ը: **Օրակարգ՝**

1.ԳՊՀ հեռակա ուսուցման ֆակուլտետի մասնագիտական կրթական ծրագրերի 2022թ. ուստարվա ուսումնական պլանների քննարկում և հաստատում:

/զեկուցող՝ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Ն. Կուտուզյան/

2.Համալսարանի 2022թ. եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշվի նախագծի վերաբերյալ:

/զեկուցող՝ գլխավոր հաշվապահ Գ. Մուրադյան/

3.«Գավառի պետական համալսարանի ուսանողների ուսման վարձը վճարելու, նպաստի ձևով ուսման վճարի փոխհատուցում (լրիվ կամ մասնակի (զեղչ), տալու կարգ»-ի նախագծի քննարկում և հաստատում:

/զեկուցող՝ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Ն. Կուտուզյան/

4.ԳՊՀ 2022-2027թթ. ռազմավարական ծրագրի մշակման աշխատանքների վերաբերյալ:

/զեկուցող՝ ՌԾ մշակման աշխատանքային թիմի անդամներ/

5.Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ.-ԳՊՀ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Ն. Կուտուզյանի զեկուցումը ԳՊՀ հեռակա ուսուցման ֆակուլտետի մասնագիտական կրթական ծրագրերի 2022թ. ուստարվա ուսումնական պլանների քննարկման և հաստատման մասին: Զեկուցողն ասաց, որ քիչ ժամանակ է մնացել հեռակա ուսուցման համակարգում դասերի սկսվելուն, ուստի անհրաժեշտ է քննարկել և հաստատել ՄԿԾ ուսպլանները: Նշվեց, որ նախնական աշխատանքներ են տարվել սպասարկող ամբիոններում, իրականացվել են քննարկումներ, կատարվել են շտկումներ, ուշադրություն է դարձվել նաև առարկայական ծրագրերին: Ուսպլաններն արդեն պատրաստ են, ուստի զեկուցողն առաջարկեց հաստատել դրանք:

Հարցի շուրջ արտահայտվեցին դեկաններ Հ.Ղաջոյանը, Ս.Ամիրխանյանը, Մ.Ավագյանը, Թ.Ասոյանը: Նրանք ասացին, որ հարցը քննարկվել է ամբիոններում, տարվել համապատասխան աշխատանք:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հաստատել ԳՊՀ հեռակա ուսուցման ֆակուլտետի մասնագիտական կրթական ծրագրերի 2022թ. ուստարվա ուսումնական պլանները:

ԼՍԵՑԻՆ.- ԳՊՀ գլխավոր հաշվապահ Գ. Մուրադյանի զեկուցումը համալսարանի 2022թ. եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշվի նախագծի վերաբերյալ: Զեկուցողը նշեց, որ 2022թ. բյուջեն կազմվել է մուտքերի և ելքերի համամասնությունը պահպանելու սկզբունքով այնպես, որ ելքերը չգերազանցեն մուտքերը: Այնուհետև զեկուցողը ներկայացրեց դրամական մուտքերի հնարավոր աղբյուրները, ապա ելքերի ուղղությունները: Վերլուծությունները հիմնավորվում էին համապատասխ թվական փաստարկումներով:

ՈՐՈՇԵՑԻՆ.- ԳՊՀ գլխավոր հաշվապահ Գ. Մուրադյանի զեկուցումը 2022թ. եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշվի նախագծի վերաբերյալ ընդունել ի գիտություն և ներկայացնել ԳՊՀ հոգաբարձուների խորհրդի հաստատմանը:

ԼՍԵՑԻՆ.- ՝ ԳՊՀ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Ն. Կուտուզյանի զեկուցումը «Գավառի պետական համալսարանի ուսանողների ուսման վարձը վճարելու, նպաստի ձևով ուսման վճարի փոխհատուցում (լրիվ կամ մասնակի զեղչ) տալու կարգ»-ի նախագծի քննարկման և հաստատման մասին: Զեկուցողը նշեց, որ այս կարգով սահմանվում է ուսանողներին տրվող զեղչերի չափերն ու պայմանները: Կարգի նախագիծը քննարկվել է ֆակուլտետներում, մշակվել է արված առաջարկություններին համապատասխան: Առաջարկվեց հաստատել կարգը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հաստատել «Գավառի պետական համալսարանի ուսանողների ուսման վարձը վճարելու, նպաստի ձևով ուսման վճարի փոխհատուցում (լրիվ կամ մասնակի զեղչ) տալու կարգ»-ը:

ԼՍԵՑԻՆ.- ԳՊՀ 2022-2027թթ. զարգացման ռազմավարական ծրագրի (ՌԾ) մշակման աշխատանքային թիմի անդամների զեկուցումները ԳՊՀ 2022-2027թթ. ռազմավարական ծրագրի մշակման աշխատանքների վերաբերյալ: Նրանք նշեցին, որ աշխատանքի ձևաչափը արդյունավետ է ռազմավարական ծրագրի մշակման համար: Կոլեկտիվ աշխատանքը դրական արդյունքի կհանգեցնի: Կատարվել է որոշակի աշխատանք ըստ առանձին ոլորտների:

ՈՐՈՇԵՑԻՆ.- ԳՊՀ 2022-2027թթ. զարգացման ռազմավարական ծրագրի մշակման աշխատանքային թիմի անդամների զեկուցումներն ընդունել ի գիտություն:

Գիտական խորհրդի նախագահ՝ Ռ. Հակոբյան

Գիտական քարտուղար՝ Թ.Ասոյան